

891.716

3nr-83

Դ. ՅՈՒԺԻՆ

ԱՆԴՐԵՅԻ ԹՈՒՂԸ



891.716.
300-83

ՊԵՏԶՐԱՏ
ՅԵՐԵՎԱՆ
1 9 3 5

2011-05

891.716
301-83

Գ. ՅՈՒԺԻՆ

Այ

ԱՆԴՐԵՅԻ ԹՌԻԶՔԸ

1009
39435

4012

Թարգմ. 2. Հովհաննիսյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԱՆԻ ԵՐԵՎԱՆԻ ՖԻԼԻԱԼ
ՅԵՐԵՎԱՆ — 1935

Պատ. խմբագիր՝ Հ. Հովհաննիսյան
Տեխ. խմբագիր՝ Հ. Տեր-Դավթյան
Սրբազրիչ Մ. Գեվորգյան

Գլավիտ 85
Հրատ. № 3253
Տիքած 3000



Հանձնված է արտ. 25/IX 1935 թ. Ստորագրված է տպելու 23/XI 1935 թ.
ՍՖ. Ա5 — 148 × 210. Պատվեր 4636
Типография им. Стачки 1902 г. АЧКПТ Ростов на-Дону.

ՆԱՎԱՊԵՏԻ ՊԱՏՄԱԾԸ

Նորվեգիայի հյուսիսում կա մի փոքրիկ նավահանգիստ Տրոմսյո։ Նա գտնվում է արդեն բեվեռային շրջանից դուրս, համարյա Մուրմանսկին հավասար լայնության վրա, մինչև անգամ նրանից ել մի փոքր ավելի հյուսիս։

Եկսպեդիցիաները, վոր ուղեվորվում են արևմտյան Յեվ-րոպայից բեվեռային յերկրները, համարյա միշտ մանում են Տրոմսյո։ Նրա նավահանգստում յեղել են իրենց նշանավոր նավազնացությանը մեկնելուց առաջ և՛ Նորդենշելդի «Վեգան», և՛ Ֆրիտիյոֆ Նանսենի «Ֆրամը», և՛ Ռուալ Ամունդսենի «Մոդը», և ուրիշ շատ հոչակավոր նավեր։

Տրոմսյոյից Ամունդսենը թռավ «Լատամ» ինքնաթիռով Նորիլսյի կործանվող եկսպեդիցիային ոգնության։ Դա Ամունդսենի վերջին ճանապարհորդությունն էր. նա ել հետ չվերադարձավ։

Իսկ սովորական ձկնորսական նավերը տասնյակներով են գալիս Տրոմսյո։

1930 ոգոստոսի 22-ին նորվեգական «Տերնինգեն» գազանվորսական նավը վերադառնալով փոկվորսությունից շպիցբերգենյան ջրերից, ժամանեց Տրոմսյո։ Անցնելով գեղատեսիլ ֆիորդը*, վորի մոտ փոփած է մաքուր փոքրիկ քաղաքը, «Տերնինգեն» կանգնեց նավահանգստում։ Այդ նավի ժամանելը վոչ մի աղմուկ չհանեց։ Նրան զիմավորեցին միայն ծովագնացների կանայք։


«Տերնինգենի» նավապետ Գուստավ Յենսենը, վոր արդեն լվացվել և մաքուր զգեստ էր հագել, կարգավորեց շատարկէլ ու մաքրել նավը և գնաց տուն։

* Ֆիորդ—նեղ, ցամաքի մեջ խորը խրված ծովախորշ է, ժայռոտ ափերով։

ձանապարհին նա մտավ տեղական լրագրի խմբագրատուն և պատմեց հետևյալը.

— Այս ամսի 8-ին մենք փոկեր եյինք փորսում Շպից-բերգենի և Ֆրանց Իոսիֆի Յերկրի միջև, Վիկտորիա կղզու մոտ: Այդ որը մենք հանդիպեցինք «Բրատվող»:

— «Բրատվող», — ընդհատեց պատմողին խմբագիրը. — Հիշում եմ, հիշում: Չէ՞ վոր նա Տրոմսյոյում եր: Նրա վրա գտնվում եր, կարծեմ, յերկրաբանական* եկապեղիցիան:



«Բրատվող»

— Միանգամայն ճիշտ ե, — պատասխանեց նավապետ Յենսենը: «Բրատվողը» գալիս եր Սպիտակ կղզուց: Եքսպեդիցիան այնտեղ յերկրաբանական հետախուզումներ և չափումներ եր կատարում: Սպիտակ կղզին գիտեք: Նա գտնվում ե Հյուսիս-արևելյան Յերկրից դեպի արևելք, մի քառասուն մղոն ** նրանից հեռու. «Բրատվողը» ընդհուպ մոտեցավ «Տերնինգենին» և եկապեղիցիայի պետ դուկտոր*** Հորնը անցավ ինձ մոտ նավեզրը: Հորնը պատմեց

* Յերկրաբանությունը — գիտություն ե յերկրի կազմության մասին:

** Ծովային մղոնը հավասար ե յերկու կիլոմետրի:

*** Արտասահմանում դուկտոր անվանում են վոչ միայն բժիշկներին, այլ և բոլոր գիտնականներին: Այստեղ խոսքը յերկրաբանի մասին ե:

ինձ, վոր նրա մարդիկ Սպիտակ կղզու վրա գտան Անդրեյի դիակը...

— Ինչպե՞ս, ի՞նչ, Անդրեյի դիակը:

Լրագրի աշխատակիցները վեր թռան իրենց տեղերից և շրջապատեցին Յենսենին:

— Սակայն դուք լավ եք հիշում, թանկագին Յենսեն, — հարցրեց խմբագիրը նավապետին, — վոր խոսքը հաակապես Անդրեյի մասին եր: Դուք ինձ ներեցեք, բայց ձեր հաղորդած լուրը ուղղակի անհավատարիս: Չէ՞ վոր այն ժամանակվանից, ինչ Անդրեն անհայտացել ե, անցել ե արդեն յերեսուն յերեք տարի:

— Ի՞նչ եք ասում, — ասաց Յենսենը, — յես ինքս եմ տեսել «Բրատվող» տախտակամածի վրա խորտակված եկապեղիցիային մասնակցողների աճյունների դազադները: Դուկտոր Հորնը ցույց տվեց ինձ նրանց իրերը — զենքերը, սահնակները, որատետրները: «Տերնինգենը» այստեղ ե, նրա նավաստիները վկա յեն Հորնի հետ մեր ունեցած զրույցին: Վերջապես Հորնը ինքը... «Բրատվողը» վերջացնում ե աշխատանքը և մի տասն ուրից հետո այստեղ կլինի...

Կես ժամից հետո ցրիչ տղան վազում եր հեռադրատուն, իսկ հետևյալ ուրը, աշխարհի բոլոր լրագրներում դուրս յեկավ միևնույն հեռագիրը:

ԳՏՆՎԱԾ Ե ԱՆԴՐԵՅԻ ՄԱՐԾՈՆԸ

Ուլո, ոգոսոսի 22. Նորվեգական հեռագրական գործակալությունը հայտնում ե. «Նորվեգական գիտական եկապեղիցիան գտել ե Սպիտակ կղզու վրա Շպիցբերգենի (Հյուսիս-արևելյան Յերկրի և Ֆրանց Իոսիֆի Յերկրի միջև) շվեդական բեվեռային հետախույզ Անդրեյի մարմինը, վոր թռել եր 1897 թ. ողապարհով Շպիցբերգենից:

ԴԵՄԻ ԲԵՎԵՌԸ ՈՂՈՎ

Անցյալ դարի լինստունական թվականներին աշխարհի բոլոր մասերի լրագրներում և ամսաթերթերում ամբողջ սլոնյականներ լցված եյին հաղորդություններով Անդրեյի և նրա

Հարյուրավոր և հազարավոր կիլոմետր կո տակված են տորոսներ — սուր սառցակույտեր։ Նրանց բաժանում են չորով լցված ձեղքեր։ Սառած ովկիանոսի վրայով հինգ կիլոմետրից ավելի չի կարող անցնել հետիոտն մարդը։ Սառույցները կարող են ձգվել յուրաքանչյուր մի նավ։ Ամենահամարձակ բեվեռային նավաստները վախենում են սառույցյալ դաշտերի սեղմումից։ Իսկ յեթե ողնով թոչել։ Ողապարիկի համար յերկուդայի չեն վոչ տորոսները, վոչ դաշտերը, վոչ սառույցի միջի լայն անցքերը։ Թարմ, բարեհաջող քամին բարձրացնում է աերոստաար և տանում նրան 30 — 35 կիլոմետր արագությամբ մի ժամվա մեջ։ Չե վոր դա մարդատար գնացի արագությունն է։ Միայն թե բարեհաջող քամի լինի — և հարյուր ժամվա ընթացքում կարելի յե թոչել Արկտիկայի մի ծայրից մյուսը, բարձրանալ Շպիցբերգենից և իջնել Ալյասկայում, իսկ ճանապարհին այցելել բեվեռ։

Այս եր Անդրեյի ծրագիրը։

Սուլոմոն Անդրեն ծնվել է Գրենն քաղաքում, Շվեդիայում, 1854 թ.։ Կրթությամբ նա ինժեներ-եյեկտրիկ եր։

1882 թ. հուլիսին յերիտասարդ քսանութամյա գիտնականը, առաջին անգամ գնաց Արկտիկա՝ ձմեռելու շվեդական գիտական-հետազոտական կայանում, Շպիցբերգենի վրա։ Բեվեռային կայանի պետը ողերևութաբան Նիլս Եկհոյմն եր, իսկ մթնոլորտային եյեկտրականության գիտումներ անողը՝ Անդրեն։ Բեվեռային գիշերվա յերեք ամսյա ժամանակամիջոցին, փոթորկի վոռնոցի տակ, վոր կատարում եր ձյունով ծածկված կայանի շուրջը, յերիտասարդ ինժեների գլխում միտք եր հղանում, վորպեսզի Արկտիկայից կարելի լինի խել անմատչելի հյուսիսային բեվեռի գաղտնիքը, պետք է թոչող մեքենա ունենալ — թոչունի նման պիտի թոչել հավիտենական սառույցի և ձյունի վրայով։ Ուսումնասիրելով ձմեռման ժամանակ բեվեռային բնությունը, Անդրեն յեկավ այն համոզման, վոր տրանսբեվեռային* հաղորդակցությունների ապագան ողումն է։

Հետեվյալ տարի արկտիկական արշավանքից վերադարձավ ականավոր շվեդական ճանապարհորդ Նորդենշելդը։

* Տրանսբեվեռային-բառացի կնշանակե անդրբեվեռային։

Նա ձգտում եր հասնել Գրենլանդիայի հյուսիսային ծայրը։ Բայց այս անվեհեր հետազոտողն ստիպված յեղավ հետ նահանջել գրենլանդական սարահարթերի անանց սառույցների առաջ, վոր փակել եյին նրա հետագա ճանապարհը դեպի հյուսիս։

Անհաջողությունը, վոր հանդիպեց հռչակված ճանապարհորդին, մեծ տպավորություն արեց Անդրեյի վրա։ Նա ավելի ևս ամրապնդվում է այն մտքի մեջ, վոր հղացել եր նրա գլխում Շպիցբերգենում ձմեռելու ժամանակ։ Դեպի բեվեռ միայն մի ուղի յե բաց — ողային, և այդ ողու պիտի եր պիտի լինի ինքը, Անդրեն։

Անդրեն գնում է Փարիզ և ծանոթանում է ողագնացության գործն ամենալավ գիտեցողների հետ, աերոստատ պատրաստող արհեստանոցի աշխատանքների ղրվածքի հետ։ Փարիզում նա մի քանի փորձնական թռիչքներ է կատարում ողապարիկով։ Հետո նա գնում է Նորվեգիայի հյուսիսը և այնտեղ ողերևութաբանական կայաններում ուսումնասիրում է բեվեռային շրջանից փչող քամիների ուղղությունը։

1893 և 1894 թվերին, Անդրեն ութը մեծ թռիչքներ է կատարում «Սվեյա» ողապարիկով Շվեդիայի և Բալտիկ ծովի վրայով։ Իսկ մի տարուց հետո, աշխարհագրական միջազգային կոնգրեսում — Լոնդոնում, Անդրեն հանդես է գալիս արդեն պատրաստի ողային ճանապարհորդության նախագծով Շպիցբերգեն — հյուսիսային բեվեռ — Բերլինդյան նեղուց մարշրուտով։

Սակայն նա չեր առաջինը, վոր մտածեց բեվեռ հասնել ողով։

Անդրեն դեռ մանուկ եր, յերբ գերմանացի Մեյսելը խոսում եր բեվեռը թոչելու մասին։ Մեյսելն առաջարկում եր դրա համար մի ողանավ կառուցել, տասներկու ճանապարհորդների համար։ Նրա մտադրությունը սա յերլուսատու գազով լցված մի ահագին բալլոն, 22500 խորանարդ մետր ծավալով, միանում է մի փոքրիկ ողապարիկի հետ։ Այդ ողապարիկի մեջ մտնում է տաք ողը։ Նա ավելի թեթեւ է սառն ողից և այդ պատճառով գործում է վորպես ամեն մի թեթեւ գազ — բարձրացնում է ողապարիկը դեպի վեր։ Տաքացած ողը գալիս է կրակարանից, վոր տեղավորված է նավակի մեջ։ Ներկայումս գիրիժարների

վրա, պայթյունից զգուշանալով վերցնում են ճանապարհորդներից նույնիսկ լուցկիները: Այժմյան տեսակետից, զազային բալլոնը և կրակը միացնելու նախագիծը կարող է խենթ յերևալ: Այնուամենայնիվ չպետք է մոռանալ, վոր դա յոթանասուն տարի առաջ եր: Բայց և այն ժամանակ այդ նախագիծը գիտնականները չընդունեցին:

Մի քանի տարուց հետո ֆրանսիացի Սիվելը վճռեց կառուցել ահագին ողապարիկ, վորը տասը մարդ բարձրացներ: Սիվելը մտադիր եր առաջ գնալ հյուսիս նախ շոգենավով, իսկ հետո, յերբ սառույցների պատճառով կարելի չի լինի արդեն նավել, — ուռցնել ողապարիկը և թռչել դեպի բեվեռը: Սակայն այդ թռիչքը չկայացավ: Սիվելը կործանվեց Փարիզի մոտ, ողապարիկով բարձրանալու ժամանակ: Յերկու ֆրանսիացի — Բեզանսոն և Երմիտալ — նախագծեցին մի ուրիշ ողապարիկ: Նրա մակույկի մեջ պիտի տեղավորվեյին հինգ մարդ և ութ եսկիմոսական շներ: Մակույկը հեշտությամբ կարելի յեր բաժանել ողապարիկից և պարզ հարմարացումների ոգնությամբ, դարձնել սահնակ կամ նավակ: Բեզանսոնը և Երմիտալը հաշվեցին, վոր եկսպեդիցիան, ներառյալ և բալլոնի արժեքը, պետք է նստի 600 հազար ֆրանկ*: Սակայն նրանք կապիտալիստներ չգտան, վորոնք կհամաձայնեյին դրամ տալ դրանց ձեռնարկության համար: Վոչ մի հարուստ համարձակություն չունեցավ այդպիսի խոշոր գումար տալու: Ֆրանսիական կապիտալիստները լավ չեյին ըմբռնում, թե վորքան մեծ են Հյուսիսի հարստությունները: Սակայն, չէ վոր «սառույցի անապատը» — միայն անունով է անապատ: Ճարպոտ փոկերը թափառում են ծովերի վրա բազմահազար հոտերով: Քիչ չեն այնտեղ ծովացուլեր, սպիտակ արջեր, կղզիների վրա ապրում են թանկարժեք մորթիով ծածկված սպիտակ աղվեսները, իսկ ամառը ծովեզերյա ժայռերի վրա սաստիկ աղմուկ է բարձրանում «թռչունների շուկաներից»: Յեվ վորքան ել վոչնչացնում են արդյունաբերողներն այդ զազաններին, նրանք չեն պակսում, — այնքան շատ են, այնքան արագ են բազմանում. այդպես անընդգրկելի յե Հյուսիսային Բևեռային ծովը:

* 225 հազար մինչպատերազմյան բուրլի:

Ամեն մի ծախս Հյուսիսի հետազոտության և ուսումնասիրության վրա գործ դրած, հարյուրապատիկ հատուցվում է: Յեվ Նորվեգիայի կապիտալիստները հիանալի հասկացան այդ: Նորվեգիան սահմանակից է Արկտիկային: Նորվեգացիները գիտեն, ինչ է Հյուսիսը: Յերբ Ֆրիտիոֆ Նանսենը սկսեց միջոցներ հավաքել «Փրամ» նավի կառուցման համար, վորպեսզի նրանով նավի դեպի հյուսիսային բեվեռը, առաջին ցանկացողները, քաջասիրտ ճանապարհորդի կոչին, նորվեգացի ձեռնարկողներն եյին:

Նորվեգացիների զրացիները — շվեդական վաճառականները և արդյունաբերողները մրցում եյին նրանց հետ արդեն շատ տարիներ: Շվեդացիք նախանձում եյին նորվեգացիների ամեն մի հաջողությանը: Յեվ հիմա ահա դեպք հանդիսացավ կազմակերպել սեփական բեվեռային եկսպեդիցիա և այն ել վոչ թե սովորական, այլ ողային: Ասդերեյի առաջարկությունն ընդունվեց: Վորպեսզի եկսպեդիցիայի համար հարկավոր միջոցները հավաքեն, Շվեդիայում հայտարարված եր ազգային հանգանակություն:

Ողապարիկը պատվիրեցին Փարիզում: Աերոստատի կառուցման աշխատանքները դեկավարում եյին այն ժամանակի լավագույն կոնստրուկտորները:


„ԱՐԾԻՎ“

Անդրեյի անընտատը ներկայացնում եր մի գունդ ջրածնով լցված: Գնդի տրամագիծը հավասար եր քսան և կես մետրի. նա չորս հարկանի տան բարձրություն ուներ: Յեթե այդպիսի գունդ տան պես առանձին սենյակների բաժանեյին, այն ժամանակ կարելի կլիներ հարյուր մարդ ամեն հարմարություններով տեղավորել նրա մեջ:

Անդրեն անվանեց իր ողապարիկը «Երեն», այսինքն «Արծիվ»: «Գրաֆ Յեպելին» գիրիժարի հետ համեմատած, վոր նորերս յեկել եր մեզ մոտ, ԽՍՀՄ, «Արծիվը» շատ փոքր կերեվար: «Գրաֆ Յեպելինը» ծավալով հավասար է քսան յերկու «Արծիվների», իսկ «Արծիվ» տրամագիծը տասներկու անգամ կտեղավորվեր այդ հսկայի յերկարության մեջ: Բայց այն ժամանակներում «Արծիվը» բավա-

կանին պատկառելի կառուցվածք եր ներկայացնում: Նրա ծավալը 4800 խորանարդ մետր եր:

Գազի այդքան մեծ քանակ կարող եր միայն պահել շատ ամուր թաղանթը: Նա ել կարած եր ամենալավ չինական մետաքսից, վոր հայտնի չե իր ամուրթյամբ: Սակայն գազն անցնում ե մետաքսի միջով, իսկ նրա թաղանթը պիտի անթափանցելի լինի: Այն ժամանակ մետաքսը պատեցին հատուկ լաքով, և նրա գործվածքը նմանվեց փայլուն կտորի, վորից մակինտոշներ են կարում:



«Արծվի» գազաթին: Գազով լցված ողապարիկի կարերի դիմացկունություն փորձումը: Ամենաձայրին ձախից կանգնած ե Անդրեյը:

Թաղանթի մեծ մասը յերեք շերտ մետաքսից եր, իսկ ամենապատասխանատու տեղերը — չորս շերտից: Թաղանթը շատ ամուր եր: Այդպիսի՝ ողի մեջ ձգված, սավանի չափ յերեք շերտավոր մետաքսից մի կտոր, կարող եր հիսուն մարդ պահել:

Թաղանթի ամենաանկալուն մասը — մետաքսե կտորների միջի կարերն եյին: Նրանց կրկին անգամ կարեցին և այնպես ծածկեցին լաքով, վոր նրանք դարձան վոչ ավելի պակաս դիմացկուն, քան ֆնացած կտորը: Վորքան ել անթափանցիկ լինի ողապարիկների թաղանթը, գազը այնուա-

մենայնիվ բոլոր ժամանակ քիչ-քիչ արտահոսում ե նրա ամենամանր միկրոսկոպիկ ծակոտիկներից: Աստիճանաբար կարող ե այնքան գազ դուրս գալ, վոր աերոստատը չի կարողանա թռչել և կիջնի գետին:

«Արծվի» այնքան ջրածնի պաշար ուներ, վոր, Անդրեյի հաշվով, նրա ողապարիկը կարող եր դիմանալ ողի մեջ յերեսուն ուր: Ջրածնով լցրած այդ ահագին մետաքսե փամփուշտի բարձրացող ուժը շատ մեծ եր: Յանցով մի գունդ, վորից կախված եր մակուկը, ինքը մակուկը, յերեք մարդ միջին, նրանց ամբողջ պիտույքները — համարյա յերեք հազար կիլոգրամ — ազատ լողում եյին ողային ովկիանոսում, այնպես, ինչպես ջրի մեջ ազատ լողում ե նավը: Բայց ահա թե ինչն եր «Արծվի» կառուցվածքի մեջ իսկապես նորություն և ահագին հետաքրքրություն առաջացնողը ժամանակակիցների մեջ: Այն ժամանակ հայտնի եյին միայն անդեկավար աերոստատներ, իսկ Անդրեյին հաջողվել եր ձեռք բերել իր ողապարիկը կառավարելու մի միջոց, ճիշտ ե վոչ կատարյալ, այլ միայն մասնակի:

Գնդին, թաղանթի և մակուկի միջև, թևերի նման, ամրացրած եյին յերեք առագաստ: Նրանց կարելի չեր պրկել, բաց թողնել և մինչև անգամ բոլորովին հավաքել: Կախում ունենալով նրանց դրուժյունից, ողապարիկը չեր թռչում կուլրի նման այն կողմը, ուր փչում եր քամին, այլ կարող եր թռչել անկյունով դեպի քամու ուղղությունը: Անդրեն հասավ այն կետին, ուր այդ անկյունի մեծությունը հասնում եր համարյա 30 աստիճանի քամու ուղղությունից ամեն մի կողմը, նրա աերոստատն այլևս քամու խաղալիք չեր — նա վորոշ չափով հպատակվում եր սովառնորդի խելացի կամքին:

Յեթե այժմյան աչքով նայենք գործին, այն ժամանակ ուղիղ անկյունի յերրորդ մասը, քամու վերաբերմամբ, այնքան ել շատ չի յերեվա: Սակայն վորքան մեծ քայլ եր դա դեպի՝ առաջ, համեմատած կատարյալ անդեկավար աերոստատի հետ:

Բայց այստեղ լուրջ արգելք ե ծագում: Ողի մեջ ազատ սովառնող ողապարիկը վոչ մի դիմադրություն չի ցույց տալիս ողային հոսանքին և թռչում ե ելի նույն արագությամբ, ինչպես փչում ե նրան տանող քամին: Մարդիկ,

վոր գտնվում են անդեկավար անբոստատի վրա, քամին չեն զգում և կարող են դատել նրա ուժի մասին միայն այն արագությունից, ինչպիսի արագությամբ նրանց տակով անցնում են հակառակ ուղղությամբ ցամաքը, կամ ծովը:


Բայց այդ դեպքում քամին չեն զգա նույնպես և առաքաստները և նրանք անպետք կլինեն մինչև այն ժամանակ, յերբ ողապարիկը կունենա նույն արագությունը, վոր ունի քամին:

Պետք էր, վոր ողապարիկը չթռչեր քամու արագությամբ: Ահա, թե ինչ հնարեց Անդրեն. «Արծվին» ամրացրած էյին ճոպաններ, կամ գայլբուսներ: Նրանք կախված էյին ողապարիկից, քարշ էյին գալիս նրա հետեվից և քրտվում սառույցին: Գայլբուսները ծառայում էյին վորպես արգելակ — ողապարիկի ընթացքը դանդաղանում էր, ողապարիկն սկսում էր ընդգիմանալ ողի շարժմանը: Ստացվում էր, այսպես ասած, համեմատական քամի: Առաքաստներն իսկույն զգում էյին քամու ազդեցությունը և ուռչում էյին: Հիմա պետք էր միայն, բաց թողնելով, կամ հավաքելով գայլբուսները, կանոնավորել համեմատական քամու ուժը և առաքաստները դարձնել Մակույկից գետին ձգված էյին նրանք ինչպես յերասաններ, վորոնց ողնությամբ Անդրեն թեև քիչ, բայց այնուամենայնիվ, կարող էր «Արծվին» կառավարել:

Բոլոր այդ մասնակի կառավարելու սխտեմը Անդրեն «Սվեյա» անբոստատի վրա փորձել էր թռիչքների ժամանակ: Դրանից հետո փորձեցին Բերլինի զինվորական ողաչունները և փորձերը հաջող անցան:

Սակայն անբոստատը վոչ միայն պիտի շարժվի առաջ, — նա պիտի դեռ բարձրանա և իջնի: Սովորաբար ողապարիկները մատակարարվում են բալաստով — ողաչունները վերցնում են իրենց հետ մի քանի պարկ ավազ: Յերբ պետք է լինում բարձրանալ, ավազը մաս-մաս գցում են ցած և թեթևացած ողապարիկը նետվում է դեպի վեր: Յերբ պետք է լինում իջնել, գազի մի մասը առանձին կափարիչներից բաց են թողնում թաղանթից, — ողապարիկը ծանրանում է և իջնում ցած: Հարմար էր արդյոք այդ ձևը Անդրենյի ողապարիկի համար: Իհարկե, վոչ: Չէ՞ վոր Անդրեն յենթադրում էր մնալ ողի մեջ մոտ յերեսուն և համենայն

դեպս վոչ պակաս վեց որից: Այդպիսի յերկարատև թռիչքի ժամանակ սառույցյալ տարածության վրայով, գազի ամեն մի խորանարդ սանտիմետրը բառիս բուն իմաստով թանկարժեք իր էր: Վորքան շատ գազ կպահպանվի, մինչև թռիչքի վերջը, այնքան ավելի յերկար ժամանակ ողապարիկը կկարողանա մնալ ողի մեջ:



«Արծիվ»

Իսկ դեռ վորքան չնախատեսված պատահականություններ կարող են լինել քաջ ողաչունների ճանապարհին: Գազի պաշարից էր կախված նրանց բոլոր գործի հաջողությունը, գուցե նույնիսկ և կյանքը: Պետք էր, ըստ հնարավորության, հեռացնել այն վայրկյանը, յերբ ողապարիկից ստիպված կլինեն գազը բաց թողնել: Իսկ յեթե այդպես է, ուրեմն չեք կարելի իդուր սպառել և բալաստը, — ստիպված էյին թանգ գնահատել ամեն մի բուռ ավազը: Պետք էր ողապարիկի համար մի ուրիշ միջոց հնարել բարձրանալու և իջնելու:


Յեւ Անդրեն այդ միջոցը հնարեց:

Նա ոգտագործեց նույն գայլերուպները: Պետք էր կանոնավորել թռիչքի բարձրութիւնը միայն մեկնելու վայրէջանին, — յենթադրվում էր ոգում մնալ 150 — 200 մետր բարձրութեան վրա: Իսկ հետո, մտածում էր Անդրեն, գայլերուպները քարշ գալով ողապարիկի հետեից, կկանոնավորեն այդ բարձրութիւնը ավտոմատիկ կերպով և ահա ինչու: Յեթե թռիչքի ժամանակ ողապարիկը սկսեր իջնել, գայլերուպներն իրենց մեծ մասով կընկնէին գետին, կամ սառուցի վրա: Ազատվելով այդպիսի ծանր բեռից, ողապարիկը կթեթևանա և կզազարի իջնելուց: Իսկ յետո՞ւ ողապարիկը վեր կբարձրանար, այն ժամանակ նա իրա հետեից կքաշեր գայլերուպները: Կախվելով իրենց ամբողջ ծանրութեամբ աերոստատից, նրանք մի քանի անգամ ավելի կշառացնէին բալաստը և սրընթաց թռիչքը կանգ կառնէր: Սրտահայտվելով մեզ ժամանակակից ողաչունների լեզվով, մենք կարող ենք ասել, վոր գայլերուպները ծառայում էին «Արծվի» համար միաժամանակ և՛ վորպես ուղղութեան դեկեր, և՛ բարձրութեան դեկեր: Ճիշտ է, այդ «դեկերը» չափազանց պրիմիտիվ և անկատար էին: Սակայն, չէ՞ վոր, այդ համարյա քառասուն տարի առաջ էր: Այն որերին, յերբ Անդրեն հայտարարեց իր նախագիծը, նրա ժամանակակիցները հիանում էին տաղանդավոր ինժեների սրամտութեան, հնարագիտութեան և հարուստ գյուտարարութեան վրա, վորն առաջինը կանգնեց գործնական խնդրի լուծման ճանապարհի վրա — գնալ դեպի բեմեռ ոգով:

ՈՂԱՊԱՐԻԿԸ ՊԱՏՐԱՍ Ե

Մակույկը կախված էր վեց հաստ կանեփե ճոպանների վրա: Իրենց մի ծայրով նրանք ամրացրած էին տանող ոգին: Քառասունութ ավելի բարակ պարաններ, իրենց հերթին պահպանում էին տանող ողակը և ձգված էին դեպի գունդն ամուր շրջապատող պարանե ցանցը: Պարանների տրամագիծը, վորոնցից բաղկացած էր ցանցը, միայն կես սանտիմետր էր, սակայն նրանց ամրութիւնն այնպես էր, վոր նրանց ամեն մեկին կարելի էր աներկյուղ մի ձի կախել: Վորպեսզի ցանցը թաղանթը չտրորի, անձրե-

վից, ձյունից, կամ մառախուղից չթրջվի, նրան մի լավ վազելին էին քսել: Դա բավական չէ, դադաթը ծածկել էին մետաքսե ծածկոցով:



«Արծվի» մակույկը

Մակույկը գործված էր ուռենու ճյուղերից և յեղեգներից և ավելի մեծ իրավունքով կարող էր զամբյուղ կոչվել: Այդ զամբյուղը սարքած էր ինչպես ծածկված նավասենյակ: Նրա տանիքի վրա կար մի փոքրիկ բաց հրապարակ: Այստեղից ողապարիկը կարող էր ծածկել իր ծանրութեան գիտությունները:



եյին կատարում և կառավարում եյին ողապարիկի թոխքը, իսկ զամբյուղում քնում եյին: Զամբյուղի տրամագիծը յերկու մետր եր: Կնշանակե, յեթե նրա մեջտեղը կանգնեք մի բարձրահասակ տղամարդ 1 մետր 80 սանտիմետր հասակով և ձեռները պարզեր յերկու կողմը, այն ժամանակ ել ուրեմն, նա չեք հասնի պատերին: Հրապարակից դեպի նավասենյակը մի դռնակ եր տանում, վոր շարժվում եր շարնիրներով: Նավասենյակը լուսավորվում եր յերկու փոքրիկ իլյումինատորներով*: Սակայն այդ «կայուտան» ավելի շուտ նման եր պահեստի: Ի՞նչ ասես, վոր այստեղ չկար:

Այստեղ պահված եր պահուցի ճուպանների կոմպլեկտը, պահուցի գիտական գործիքները և այն բոլորը, ինչ վոր կարող եր պետք լինել՝ յեթե ողապարիկը խորտակման յենթարկվեր: Ուղաչուները վերցրել եյին իրենց հետ վեց ամսվա ուտելիքների պաշար, նույնպես հրացաններ և փամփուշտներ, վոր վորսով լրացնեն իրենց պաշարեղների պահեստը, յերբ նա կսկսի սպառվել:


Մակույկի տանիքից պարանե սանդուխքը տանում եր դեպի հենարան ողակը: Նա այնպես եր շինված, վոր իրերի և պարենի մի մասը նրա վրա յել եր տեղավորված: Այնտեղ եյին ծալվող բրեզենտե ողնական նավակը, վոր վերցրել եյին այն դեպքի համար, յեթե անբուստատը կնստի ջրի վրա, և թեթև սահնակ, վոր կարելի լինի արշավանքում բոլոր պիտանի իրերը տանել սառույցի վրայով, յեթե ողապարիկը կիջնի սառույցյալ դաշտի վրա:

Բայց զամբյուղը վոչ միայն կայուտա և պահեստ եր, նաև աղափնետուն եր: Նրա մեջ գտնվում եյին մի քանի վանդակներ, վորոնց մեջ նստած եյին յերեսունվեց պոստային աղափնիներ: Դա եկապեղիցիայի կապի ծառայությունն եր: Ռադիո-հեռագիր այն տարիներում չկար: Այն վայրկյանից, յերբ բեվեռային եկապեղիցիան թողնում եր վերջին մարդաբնակ կետը, նրա մասին վոչ վոր վոչինչ չգիտեր: Յե՛վ այդ տեղում եր այնքան ժամանակ, մինչև քաջերը վողջ և անփորձ չեյին վերադառնում նորից հավիտենական սառույցների թագավորությունից, բեվեռային

* Իլյումինատոր — այսպես են կոչվում ծովային և ողային նավերի լուսավորումները:

գիշեր խավարից: Իսկ մի քանի եկապեղիցիաներ անհայտանում եյին ընդմիջտ: Նրանց մասին այդպես ել ասում եյին. անհայտ կորան:

Ահա, հենց դրա համար ել, վոր իրենց մասին լուր տան, Անդրեյի եկապեղիցիան աղափնիներ եր վերցրել: Ուղաչուները կամենում եյին ամեն ուր բաց թողնել աղափնիներին: Խողովակի նման վոլորած տոմսակը մտցվում եր մոմած թղթից պատրաստած թեթև պարկուճի մեջ: Այդ «պարկը» ամրացվում եր թևավոր պոստատարի պոչի փետուրներին, և հետո աղափնուն բաց եյին թողնում: Պոստի աղափնիները, վոր հատուկ վարժություն են անցել, բավականին հաջող են գտնում տան ճանապարհը, մինչև անգամ անծանոթ տեղում: Անդրեն յենթադրում եր այդպիսով տեղեկացնել աշխարհին «Արծվի» թոխքի մանրամասնությունները և նրա վորտեղ լինելը:



Լողացող բուլոկ:

Նույն նպատակով վերցված եյին և տասներկու «շշային պոստի» գործիքներ: Ալիքների միջին լողացող ամուր ամրացրած շիշը տոմսակով — անա ամենահասարակ ձևը այդպիսի պոստի. Անդրեն կատարելագործեց այդ ձևի կապը: Նրա գործիքներն իրենցից ներկայացնում եյին խցանե բուլոկներ (լողաններ), վոր իլիկի ձև ունեյին:

Բուլոկի մեջ մտցրած եր պղնձե խողովակ: Նա հերմետիկ կերպով փակվում եր պղնձե խթանով, վորին ամրացրած եր փոքրիկ դրոշակ: Խողովակի մեջ գնում եյին նամակը: Բուլոկները ծառայում եյին իբրև լողացող «ծրարներ»: Նամակ ուղարկելը շատ հեշտ եր. բուլոկը գցում եյին մակույկից դուրս:

«Արծվի» մակույկի մեջ անհարմար և ցուրտ եր: Լավ կլինեք այդպիսի անհրապույր կահավորումի մեջ կազդուրվել տաք կերակրով: Սակայն վո՞ր խենթը սիրտ կանի կրակ վառել հինգ հազար խորանարդ մետր ջրածնի զրացիության մեջ: Գազը, թեև փոքր քանակությամբ, բայց համեմայն դեպս ծորում եր թաղանդի միջով, և «Արծվի» բոլոր ժա-

մանակ սլանում եր ջրածնի աներևույթ ամպի միջով: Ամենա-
փոքրիկ կայծ — և ողապարիկից ու նրա միջի մարդկանցից
հետքն անգամ չեր մնա:

Սակայն և այդ դեպքում յերբ գտնվեց: Մակուլկից առան-
ձին պարանի վրա իջնում եր ամեն կողմից փակված մի
արկղ, վորի ներսում գտնվում եր սպիրտովկան: Այդ ողային
«խոհանոցը» կախված եր ութ մետր մակուլկից ցած — մի
տարածութուն, վոր բավական ե անվտանգութունն ապա-
հովելու համար: Պարանի յերկայնությամբ մակուլկից ար-
կղի մեջ անցնում եր առաձգական ռետինե խողովակ, վորի
ներսում գտնվում եր մի ժապավեն: Հենց վոր ժապավենը
ձգելին, զսպանակներով ամրացրած լծակների պարզ սիս-
տեմը ինքը ճատացնում եր իր մեջը դրած վառիչով, և ապա
մոտեցնում եր կրակը սպիրտովկային: Սպիրտը բոցավառ-
վում եր և տաքացնում եր կերակուրը: Վորպեսզի խոհա-
նոցի գործողությունը վերջանա, բավական եր փչել խողո-
վակի մեջ և կրակը հանգչում եր: Մնում եր միայն արկղը
բարձրացնել մակուլկը և... ուտել: Այդ գործիքը շատ
անգամ եր փորձվել և լավ հետևանքներ եր տվել:

Լրագիրները, տեղ չխնայելով, ամեն մանրամասնու-
թյուններով ամբողջ աշխարհում տարածեցին Անդրեյի եկա-
պեղիցիայի նկարագրությունը: Բայց չնայած իր շինվածքի
պարզությանը և անայնագործությանը, ողային խո-
հանոցը, թերևս ավելի քան մի ուրիշ հարմարեցում
«Արծվի» վրա, հիացում առաջացրեց ժամանակակիցների
մեջ և մանավանդ այն ժամանակի յերիտասարդ սերնդի
մեջ: Մի հայտնի բանաստեղծ նորերս պատմում եր ինձ, թե
ինչպես ինքը, այն ժամանակ տաս տարեկան տղա, ուղղակի
զառանցում եր Անդրեյի խոհանոցով:

Աերոստատի բոլոր մասերի, գործիքների և այլ ինվեն-
տարի վրա մակագրած եր.

ԱՆԴՐԵՅԻ ԲԵՎԵՌԱՅԻՆ ԵԿՍՊԵԴԻՑԻԱ

1896 թ. գարնան մոտ, ողապարիկը բոլորովին պատ-
րաստ եր: Մեկնումը նշանակված եր նույն թվի հուլիսին:
Թռչելը յենթադրվում եր սկսել Շպիցբերգենից: Այնտեղից
մինչև բեվեռ — մոտ 1200 կիլոմետր ե: Բարենաջող քամու

դեպքում Անդրեն այդ ճանապարհին գցում եր յերկու-
որ: Մնացած տարածությունը բեևոից մինչև Հյուսիսային
Ամերիկայի ափերը 2300 կիլոմետր յենթադրում եր անց-
նել չորս որում: Ընդամենը, միանգամայն բարենաջող պայ-
մաններում, վեց որ: Յերեսուն որվա գազի պաշարով,
քսան չորս որը պահվում եր ամեն տեսակի անսպասելի
պատահանքների համար: Արկտիկայի խորքերում կարող
եր անհոգմություն լինել, քամին կարող եր իր ուղղությունը
փոխել, ողապարիկը կարող եր բերել Սիբիրի անապատ
սոււնդրաները, կամ Գրենլանդիայի սառցադաշտերը: Բեվե-
ռային ողային հոսանքները մինչև այսօր ել վատ են
ուսումնասիրված: Գազի հագապատիկ պաշարը, Անդրեյի
կարծիքով, վորոշ կերպով պիտի ապահովեցներ եկապե-
ղիցիային զանազան անախորժ անակնկալություններից:

Սակայն, հայտնի յեր, վոր ամառը Շպիցբերգենի շրջանում
սովորաբար փչում են հավասար հարավայինի քամիներ:
Նրանք պիտի տանելին յերեք քաջերին ուղղակի դեպի
հյուսիսային բեվեռը, այնտեղ, ուր այնքան տարի ապար-
դյուն ձգտում եյին տանելակ անվեհեր հետազոտողներ:

Անդրեյի եքսպեդիցիան կահավորված եր այն ժամա-
նակի ողապանցության տեխնիկայի վերջին խոսքով: Այն
ժամանակի ամենալավ մասնագետների կարծիքով, ամբողջ
եակապեղիցիայի սարքավորումը և պատրաստությունը
հիմնալի մտածված և լավ կատարված եր: Ահա թե ինչու
այս ողային ճանապարհորդությանը հաջողութուն եյին
գուշակում և նրանից թանկարժեք գյուտեր եյին սպասում:
Ճիշտ ե, հենց այն ժամանակ ել շատերին այդ թռիչքը
ֆանտաստիկ և անմիտ մտադրություն եր թվում: Բայց
ավելի շատ մարդիկ հավատում եյին անվեհեր ինժեների
հաջողությանը:

Քառասուն տարուց անց եր Անդրեն, յերբ վճռեց թռ-
չել դեպի հյուսիսային բեվեռը: Անվեհեր ողաչուն տասը
տարի տարված եր բեևոը հասնելու մտքով: Նրա թռիչքի
ծրագիրը հավանականութուն գտավ Շվեդական գիտու-
թյունների ակադեմիայի կողմից: Իսկ հուշակավոր Նորդեն-
շելդը, որինակ, պատրաստակամություն հայտնեց մասնակ-
ցելու այդ թռիչքին: Նրան հետ կանգնեցրին այդ մտա-
դրությունից, վորովհետև նա արդեն 65 տարվա մեջ եր:

Անդրեյին ուղեկցելու ցանկացողներին փրկութիւն, ազատում չկար: Վերջապես հայտնի յեղան եկապեղիցիային մասնակցողների անունները: Անդրեյի հետ դեպի հյուսիսային բնուր պիտի թռչէին յերկու զիտնական Ֆրգիկոսներ: Ստրինգբերգը և Եկհոլմը — այն Եկհոլմը, վորի հետ տաններեք տարի դրանից առաջ Անդրենն ձմեռել եր Շպիցբերգեհնում:

ՎԻՐԳՈ ԾՈՎԱԽՈՐՇԸ

1896 թ. հունիսի 7-ին Գյոտեբորգի* լայնածավալ ծովափը լիքն եր ժողովրդով: Ինչպես ասում են, ասեղ պցելու տեղ չկար: Այդ ուրը «Վիրգո» շոգենավը մեկնում եր Շպիցբերգեն: «Վիրգոյի» յեզրին գտնվում էին Անդրենն, Ստրինգբերգը, Եկհոլմը և ուրիշ շատ զիտնականներ, վորոնք գնում էին ճանապարհելու իրենց բարեկամներին և ոգնելու թոխչի ժամանակ: «Վիրգոյի» վրա բարձած եր եկապեղիցիայի թոխչի ամբողջ գույքը: Հենց այդտեղ, ահագին արկղում դրած եր վարպետորեն ծալած «Արծի» թաղանթը: Ծանապարհորդները վերցրել էին նույնպես ամեն տեսակ նյութեր և գործիքներ, վոր պետք էին աերոստատի տակն անգար շինելու և տեղում ջրածին հայթայթելու համար:

Լավեցին ճանապարհողների բարձր վողջույնների ձայները և «Վիրգոն» նավակապերն արձակելով հեռացավ նավամատույցից և դանդաղ սկսեց շուռ գալ դեպի նավահանգստի մուտքը: Մեկնողների հետևից լավեցին յերջանկութիւն և հաջողութիւն բարեմաղթողների ձայները:

Թռչելու տեղն ընտրեցին Դանիական կղզին, Արևմտյան Շպիցբերգենի հյուսիսային ափերի մոտ: Ավելի հեռուն դեպի հյուսիս սկսում եր ծովը, վոր յերբեք չեր ազատվում սառույցներից: Այստեղ Դանիական կղզու վրա Անդրենն ընտրեց իր ճամբարի համար հարմար Վիրգո ծովախորշը:

Յերկու շաբաթ անց Գյոտեբորգից մեկնելուց հետո, «Վիրգո» նախն զգուշությամբ առաջանալով լողացող սառույցների միջով, բարեհաջող կերպով հասավ նույն անունով ծովախորշը:

Շպիցբերգեհնում դեռ ձմեռ եր, հովիտներում խոր ձյուն

* Մեծ շվեդական նավահանգիստ Կատտեգատի նեղուցի ափին

կար: Բայց մայր չմտնող հունիսյան արևն արդեն սկսել եր տաքացնել, և սպիտակ ծածկոցի տակից տեղ-տեղ յերեվում էին մուգ մոխրագույն լեռների ծայրերը և ժայռերի սուր կողերը: Չնայած ձմեռն, աշխատանքը յեռաց:

Թեք դեպի ծովն իջնող լեռան ստորոտում, բարձր ժայռերի և սառցադաշտի միջև, քամիներից լավ պաշտպանված անկյունում սկսեց արագ մեծանալ բաց դեղնագույն փայտե անգարը — հսկա բազմանկյունանի մի տուփ, առանց տանիքի: Նրա կողերի հետեվում «Արծիվը» առժամանակ կաշտպանվի վատ յեղանակից, վոր վերջ ի վերջո ձախրի սպիտակավուն բեկեռային յերկնքում: Անգարը շրջապատված եր դիտարանների ժանյակով և ոժանդակ շինութիւններով: Նրանց հիմքի մոտ գտնվում եր «գործարանը» — փայտե տնակ, վորտեղ ջրածին եր ստացվում և ոգապարիկը գազով լցնելու գործիքներն էին գտնվում: Վոչ հեռու վրաններ էին խփած յեկող մարդկանց համար: Գիշերում էին — վնրը շոգենավի վրա, վնրը վրաններում: Տաքության համար նրանց մեջ պրիմուսներ էին վառվում և քնապարկերում մարդիկ իրենց հրաշալի էյին զգում:


Ծամբարն սկսեց աշխատավորական կյանքով ապրել: Անդրեն, Ստրինգբերգը, Եկհոլմը և նրանց հետ յեկած մեքենագետները և բանվորները, առանց հանգստանալու, աշխատում էին անգարի վրա, դատարկում և ջրում էին գործիքները և պարենը, պատրաստում էին ողապարիկը: Աշխատանքի մեջ ամիսն աննկատելի անցավ: Միայն հուլիսի վերջին անգարը պատրաստ եր: Տաքացավ, Ջյունն իջնում եր շրջակա սև սարերից: Թարմ մամուռի կանաչ սփռոցով ծածկվեցին կենդանացած ափերը:

Իսկ ողապարիկը դեռ կապած եր անգարում:

Պատրաստ եկապեղիցիան իզուր սպասում եր հարավային քամուն: Անհողմութիւն եր տիրում: Անդրեն ջղայնաբար կծում եր բեխերը, աչք չեր հեռացնում անեմոմետրի* կիսակոոր թասերից, վոր ամրացրած եր բարձր ձողի վրա, — թասերը չէյին պտտվում: Իսկ, յեթե քամին ել բարձրանում եր, դարձյալ բարեհաջող չեր թռչելու համար, վորովհետև

* Քամու ուժը վորոշելու գործիք:

բուրդովին հակառակ կողմն եր փչում: Արդեն ոգոստոս ամիսն եր: Բեվեռային կարճ ամառն անցնում եր: Մոտենում եր աշնան մրրիկներն ժամանակը: Յեվ Անդրեն ստիպված յեղավ մի տարով հետաձգել իր թռիչքը: Նորից եկապեղիցիայի ամբողջ գույքը բարձեցին շոգենավի վրա և



«Արծիվը» անգարում, թռիչքից առաջ:

մինչև յեկող ամառ թողեցին Շպիցբերգենի անհյուրընկալ ափերը: Վիրգո ծովախորշում մնաց վորպես փարոս միայն գատարկ անգարը: Եկապեղիցիան վերադարձավ Շպիցիա:

Համարյա դրա հետ միաժամանակ Նանսենը իր ընկեր Իոհանսենի հետ, իսկ նրանց հետեվից նաև նրանց «Փրամ» նավը, վերադարձան տուն, յերեք տարվա թափառումներից

Արկտիկայի անսահման տարածություններում: Սակայն մինչև բեվեռ Նանսենը, այնուամենայնիվ, չհասավ: Նա չէր կարող հաղթել անծայր, ձյունապատ տափարակները հոծ ծածկված ցցված տորոսներով և սառցե սուր կույտերի շղթաներով: Բեվեռը շրջապատված եր անառիկ բերդով:

Թոչեկ յեկող տարի, թոչեկ ինչ ել վոր լինի. — այս միտքը հիմա ամբողջովին աիրել եր Անդրեյին: Այնտեղ, վորտեղ չի անցել «Փրամը», վորտեղ չի կարողացել սահել Նանսենի շների լծվածքը — այնտեղ բաց ե ճանապարհը «Արծիվի» համար:

Աերոստատը նորից ուղարկեցին Փարիզ: Ոգապարիկը և իր պարագաները նորից ստուգվեցին և փորձվեցին:

Սակայն հիմա «Արծիվի» խմբի մեջ գտնվեց մի մարդ, վորն սկսեց կասկածել եկապեղիցիայի հաջողությանը: Դա դոկտոր Եկհոլմն եր: Ամառը, Վիրգո ծովախորշում, նա յեռանդուն մասնակցություն եր ցույց տալիս «Արծիվի» թռիչքի պատրաստություն մեջ: Այդ ժամանակամիջոցին նա լավ ուսումնասիրեց ոգապարիկը: Իր ուսումնասիրությունների հիման վրա նա մի հոգված հրատարակեց, վորի մեջ գրում եր, վոր գաղի դուրս հոսելն ոգապարիկից կլինի ավելի շատ, քան յենթադրում ե Անդրեն: Ոգապարիկը, — ապացուցում եր Եկհոլմը, — չի մնա ոգում, նույնիսկ նշանակած ժամկետի կեսը: Թռիչքը կարող ե անհաջող վերջանալ և այդ պատճառով նա, Եկհոլմը հրաժարվում ե եկապեղիցիային մասնակցելուց:

Եկհոլմը համարվում եր Անդրեյին բարեկամ և նրա հրաժարականը ծանր հարված հասցրեց Անդրեյին: Բայց շուտով յեկավ միսթարությունը. անմիջապես Եկհոլմի տեղը գտնվեց մի ուրիշ գիտնական — յերիտասարդ ինժեներ Ֆրենկելը:

Եկապեղիցիայի վերջնական կազմը պարզվեց, Սուրմոն Անդրեն, Նիլս Ստրինգբերգ և Կնուտ Ֆրենկել: Ստրինգբերգը քսան և յոթ տարեկան եր, իսկ Ֆրենկելը քսան և հինգ:


Մի պայծառ գարնան օր, 1897 թ. մայիսի 18-ին, Գյոտեբորգի նավամատույցը նորից լիքն եր բազմությամբ: Նավահանգստում, կարծես, ժողովվել եր ամբողջ քաղաքը: Ինչպես և անցյալ տարի, Գյոտեբորգի բնակիչները և

անթիվ լեկտորները խանդավառ ճանապարհում եյին Շախ-բերգեն գնացող եկսպեդիցիան: Այս անգամ նրա տրամադրութեան տակ եյին դրել շվեդական զինվորական նավատորմի ղեկավար հրետաձիգ նավակ «Սվենսկուտնդ»: «Սվենս-

Ֆրենկել



Ստրինգերեր



Ստրինգեր

կստնդը» մեկնելու յեր դեպի հեռավոր Վիրգո ծովախորշը Դանիական կղզու վրա: Այնտեղ հրետանավի խումբը պիտի ոգնեք ողաչուններին ողապարիկը կարգավորելու և ողաչին ճանապարհ գնալու:

Տասներկու որից հետո «Սվենսկուտնդ» արդեն մոտենաւ եր Դանիական կղզուն: Վիրգո անապատ ծովախորշը նորից կենդանացավ: Անցյալ տարի թողած անգարը դիմավորեց լեկտորներին, ինչպես հին ծանոթի: Նա բարեհաջող կերպով եր տարել խիստ բեկեռային ձմեռը և առաջվա պես բարձրանում եր ծովափնյա սև ժայռերի մեջ: Նորից մարդիկ սկսեցին քարշ տալ նրա մոտ, ձյան վրայով արկղեր, վորտեղ պահված եյին ողապարիկի և մակուկի մասերը: Յերեք շաբաթում «Արծիվը» նորից պատրաստ եր ուղեվորման: Հունիսը վերջանում եր:

Հունիսի 30-ին թաղանթն սկսեցին լցնել ջրածնով: Գազի գործարանում աշխատանքը գնում եր տենդորեն: Ոգերևութաբանական դիտողությունները ցույց եյին տալիս, վոր շուտով պիտի փչեն հարավային քամիներ:

Ահա թե ինչ եր գրել իր որատետրի մեջ մի գերմանացի պրոֆեսոր, վոր ճանապարհում եր եկսպեդիցիան:

«Անդրեյը չի հեռանում անգարից: Նա մի նիհար, միջահասակ մարդ ե, ամուր կազմվածքով: Նա քիչ ե խոսում, համեստ ե պահում իրեն և իր մտքերի մեջ խորասուզված ե յերևում: Սակայն բավական ե, վոր նա գլուխը բարձրացնի, և կարելի յե տեսնել, թե ինչպես են նրա աչքերը փայլում անողորմ լճականությամբ և յեռանդով: Դա հեռուն նկատող հետազոտողի հայացք ե: Յեվ միայն յերբեմն դողացող խիտ, մուգ, ցած ընկած բեխերը ցույց են տալիս, վոր այդ մարդն ել ջրեր ունի, վոր նրան անհամբերությունը կրծում ե: Եկսպեդիցիան ուղեկցող գիտնականները խոնարհությամբ անցնում են հարգանք ներշնչող սավառնորդի մոտով»:

Անդրեյի անհամբերությունը հասկանալի յեր, — բոլոր պատրաստությունները վերջացած եյին, «Արծիվն» պակասում եր միայն բարեհաջող քամին:

Հուլիսի 8-ին ուռցրած «դապարիկը համարյա ամբողջովին դուրս սողաց անգարից և ձգված գալղրոպներով զրուպած, տատանվում եր քամուց իր պահեստի վերին յեզրին: Ողը պարզ եր և մաքուր: Մեծ տարածութեան վրա կարելի յեր նկատել ամենամանր ճեղքերը և ակօսները մութ սարերի վրա, վորոնց վրայից իջնում եյին, կարծես վրձինով քաշած, ձյան և սառույցի թելերը: Իսկ զմրուխտյա —

կանաչ և կապույտ շողողող գլետների* ֆոնի վրա, վերեր թռչում դարչնա-դեղին փայլուն ոդապարիկի մարմինը։ Յեղանակը փոխվում եր։ Սաստիկ քամին հարձակվում եր յերբեմն փոթորկի ուժով։ Վորպեսզի կարելի լինի ոդապարիկը պաշտպանել քամու ուժից, ստիպված եյին, վորբան կարելի յե, նրան նորից ներս քաշել անգարի խորքը։

Վերջին պատրաստություններն եյին — պաշարեղենը և բալաստն արդեն մակույկի մեջ եյին։

Վերջապես հուլիսի 10-ին քամին փչեց հարավից։ Ամպերն արագ սլանում եյին հյուսիս։ Անեմոմետրի թասերը միակերպ և հավասար պտտվում եյին, ողի հզոր հոսանքը գնում եր հյուսիսային ուղղությամբ։ Հեռավոր հարավում գիշեր եր։ Բայց այստեղ հյուսիսային լայնության ութ ութսուններորդ աստիճանի վրա արեվը հուլիսին մայր չի մտնում։ Այդ արևոտ գիշերն ամբողջ ճամբարն անցկացրեց լարված սպասողության մեջ, անքուն։ Հարավային քամին ուժեղանում եր։ Առավոտյան ժամի տասին, հուլիսի 11-ին Անդրեն կարգադրեց թռչելու պատրաստվել։

Ոդաչունները գրում են հրաժեշտի վերջին նամակները, սղմում են վերջին անգամ ուղեկցողների ձեռքերը և տեղերը բռնում ոդապարիկի մակույկի մեջ։ «Սվենսկուռնդի» նավաստիներն սկսում են կամաց-կամաց արձակել ոդապարիկը պահող ձուպանները։ Նա արդեն կիսից դուրս եր յեկել անգարից, յերբ ուժեղ քամին մտցրեց նրան նորից անգարի մեջ։ Յերբ փոքր հանդարտվեց, Անդրեն հրամայեց.

— Տնւր ծայրերը։

Յեվ հանկարծ փայլուն դեղին գունդն իր բոլոր զանգվածով յերևաց անգարի պատերի վրայից։ Ոդապարիկի կողքից բարձրացավ շվեդական զրոշակը — կապույտ-դեղին խաչով, ներքևում լավեցին վողջույնի ձայներ, իսկ մի բուպեյից հետո «Արծիվ» արդեն 150 մետր բարձրության վրա յեր։ Նա դանդաղ հեռանում եր դեպի հյուսիս։ Նրա հետեվից սառցադաշտի անհարթ մակերևութի վրա քարշ եյին գալիս գայգրոպները։ Յերեկվա յերկուս և կես ժամն եր։

* Նույնն է, ինչ վոր «սառցադաշտ»։

Հանկարծ ոդապարիկն սկսեց արագ իջնել։ Թվում եր, վոր իսկույն կընկնի առաջը փռված ծովի մեջ, վորտեղ յողում եյին սառցադաշտից պոկված սառույցները։ Անգարի մոտ մնացած դիտողները սիրտը թուլացավ, բայց և իսկույն ազատ շունչ քաշեցին։ Ոդաչունները վայր գցեցին ձի բալաստ։ Մի կտրուկ ձիգ դեպի վեր — և թեթևացած աերոստատը թռավ 700 մետր բարձրության վրա։ Այդ վայրկյանին սառույցին կառչելով ոդապարիկից պոկվեց յերեք մեծ գայգրոպների զգալի մասը և մնաց պառկած ցածում։ Հեռանալով ավելի ու ավելի, «Արծիվ» դարձյալ սկսեց իջնել և վերջապես ուղղվեց հարյուր մետրանոց բարձունքի վրա։ Այդտեղ ուժեղ քամին թռցրեց աերոստատը և քշեց նրան դեպի հյուսիս՝ ժամը 40 կիլոմետր արագությամբ։ Շուտով նա հավասարվեց Ամատերդամ կղզու առաջնավոր լեռների հետ, վոր գտնվում ե վիրգո ծովախորշի դիմացը։ Ոդապարիկն արդեն մանկական գնդակի մեծության եր յերեվում և վերջապես անհայտացավ փոքր լեռների շղթայի յետեվը։ Փոքրաթիվ ուղեկցողները լուռ նայում եյին անհայտացող ոդապարիկի հետևից, իսկ հետո ցրվեցին իրանց տեղերը — վորը վրանները, վորը նավը — և յերկար դեռ խոսում եյին իրար մեջ «Արծիվ» և նրա անվեհեր սավառնորդների մասին։

ԱՆԴՐԵՅԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Ամբողջ աշխարհն անհամբեր լուրերի յեր սպասում «Արծիվ» թռիչքի մասին։ Առաջին հերթին իհարկե լուր պիտի բերեր նրա աղափնյա պոստը։ Ամեն մի թռչող աղափնու մեջ, վոր նկատում եյին Սկանդինավյան ծովափում, մարդիկ անպատճառ կամենում եյին տեսնել Անդրեյի պատվիրակին։ Ամեն մի աղափնի, վոր բռնվում եր Ատլանտյան ովկիանոսի հյուսիսային մասում, առաջացնում եր մի ամբողջ հեղեղ հեռագրների և աղմուկ լրագրներում և միայն հետո, դուրս եր գալիս, վոր այդ աղափնիները վոչ մի առնչություն չունեն Անդրեյի եկսպեդիցիայի հետ։

Մի քանի օր «Արծիվ» թռչելուց հետո, հաջողվեց բռնել Ստավանգերի * մոտ մի աղափնի։ Մյուս չորսը իրենք իջել

* Նավահանգստային քաղաք հարավային Նորվեգիայում։

եյին «Ռոգենհիլդ» շոգենավի վրա, վոր նավում եր Հյուսիսային ծովով*։ Սակայն վոչ վոր չեր կարող ասել՝ պատկանում են արդյոք այդ հինգ աղափններն Անդրեյի եկապեղիցիային թե վոչ — նրանց վրա վոչ մի նամակ չկար։ Վեցերորդ աղափնուն բռնեցին Տրոմսյոյի մոտ։ Նրա մոտ գտան մի տոմսակ։ «Հյուսիսային բեվեռն անցանք 15»։ Տոմսակի վրա ստորագրություն չկար։ Սակայն ու՛ր, Անդրեյից բացի, կարող եր հասնել բեվեռն։ Իսկ 15 թիվը կարող եր միայն նշանակել 15-ը հուլիսի, վորովհետև Անդրեն թուել եր հուլիսի 11-ին։ Ուրեմն Անդրեն հասել եր բեվեռն հուլիսի 15-ին։ Հետո պարզվեց, վոր այդ «նվաճած բեվեռն» մի տափակ կատակ եր մի ինչ վոր անպիտանի, վոր կամեցել եր այդ ձևով զվարճանալ դյուրահավատ մարդկանց վրա։

Արդեն մեկ ամիս եր, վոչ վոր չգիտեր, վորտեղ են գտնվում յերեք թուած ողաչունները և ինչ պատահեց նրանց։ Միայն զանազան յենթադրություններ եյին պատում նրանց վիճակի մասին։

Հրազդներում շարունակ դիտումներ եյին տպագրվում «Անդրեյի աղափնիները» մասին, իսկ յերեքն տեղեկություններ եյին տպվում, վոր մինչև անգամ նկատել են Անդրեյի ողապարիկը։

Ամերիկայից լուր յեկավ, վոր ոգոստոսի մեկին կետ վորսող «Սալմիկ» նավից, վոր նավում եր Գրենլանդիայի արևմտյան ափերի մոտով, տեսել են ողապարիկը, վոր ըստ հեռագրի, «արագ

հեռանում եր արևմուտք»։ Ուրիշ ողային եկապեղիցիա դեպի բևեռային յերկրներ՝ այդ ժամանակ չկար։ Պարզ ե, վոր «Սալմիկից» նկատած ողապարիկը կարող եր լինել միայն Անդրեյինը։ Ուրեմն, յերեք շաբաթվա ընթացքում

քամիները հասցրել են նրան Հյուսիսամերիկյան բեվեռային արշիպելագր։ Իսկ մի քանի որ դրանից առաջ, լրագրերում յերեվաց մի ուրիշ հայտարարություն։ Մի պարզ ամառվա գիշեր, Սպիտակ ծովով գնում եր հոլանդական մի շոգենավ։ Նրա նավապետը, վոր նիրհում եր նավակամը՝ վրա, հանկարծ ցնցվեց և սկսեց ուշադրությամբ նայել դեպի հեռուն։ Կաթնա-մոխրագույն հորիզոնի վրա, հագիվ նշմարելի յեր մի ինչ վոր կյոր մեծ առարկա — ավելի հավանական ողապարիկ, վոր ընթանում եր դեպի արևելք։ Ողապարիկը մերթ յերեվում եր, մերթ կորչում լուսաբացի մշուշի շերտերում, վոր սահում եր ջրի վրայով։ «Անդրեն ե», — մտածեց նավապետը վոր շատ եր կարգացել հուշակված եկապեղիցիայի մասին։ Նա բոլորովին սթափվեց քնից։ Սակայն աերոստատն ել մինչև այդ ժամանակ վերջնականապես անհայտացավ։ Շուրջը միայն յերկինքն ու ջուրն եյին։

Սկանդինավյան թերակղզու հարավային ափերից մի ինչ վոր շոգենավից ել տեսել եյին մի աերոստատ։ Միայն հոկտեմբերի սկզբին Ստոկհոլմ հասցրել եյին Անդրեյի իսկական նամակը։ Հուլիսի 15-ին, Շպիցբերգների մոտ, նորվեգական արդյունաբերական «Ալկեն» նավի կայմի վրա նստեց մի աղափնի «Ալկենի» շկիպերը հրացանով սպանեց նրան։ Աղափնու պոչին մի թղթե պարկուճ եր կապած, իսկ նրա մեջ դրած եր մի տոմսակ։ Տոմսակում ասված եր.

Անդրեյի բևեռային եկապեղիցիայից,

«Աֆտոնրլադետի» խմբագրությանը, Ստոկհոլմ։ Հուլիսի 13-ին, ցերեկվա 12 ժ. 30 րոպե, 82° 2' հյուսիսային լայնության, 15° 5' արևելյան յերկարության։ Առաջանում ենք լավ ընթացքով դեպի արևելք, թեքվելով 10° դեպի հարավ։ Աերոստատի վրա ամեն ինչ բարեհաջող ե։ Սա յերրորդ աղափնն ե։

Անդրե

Համարյա յերեք ամիս պետք յեղավ, վոր այդ պոստը հասներ նշանակած տեղը։ Բայց այս անգամ կասկած չեր կարող լինել։ Տոմսակը գրված եր հենց Անդրեյի իր ձեռով, եկապեղիցիայի հատուկ բլանկի վրա։ Վորպեսզի բոլորը կա-

ՔԱՆՈՒՆԱԿԱՆ ԱՄՈՒՆԻ
ՀԱՄԱՐԱՆԱԿԱՆ ԲԱԼԻՍԿԱ
5 13 14
K1 12 30 15
L1J 32° 2
L1J 15 5 W
4 30 14 1
01 10° 14
1 1/2 1/2
1 1/2 1/2
3 1/2 1/2
K1 1/2 1/2
K1 1/2 1/2
K1 1/2 1/2


Աղափնու բերած Անդրեյի
նամակը։

հեռանում եր արևմուտք»։ Ուրիշ ողային եկապեղիցիա դեպի բևեռային յերկրներ՝ այդ ժամանակ չկար։ Պարզ ե, վոր «Սալմիկից» նկատած ողապարիկը կարող եր լինել միայն Անդրեյինը։ Ուրեմն, յերեք շաբաթվա ընթացքում

* Հյուսիսային ծովը այլապես կոչվում ե Գրենլանդական ծով։

բողանային համոզվել տոմսակի իսկության մեջ, «Աֆտոն-բլադետը» («Յերեկոյան լրագիր») տպեց նրա ֆակսիմիլեն*։ Վերջապես, վորպեսզի փարատվեն ամեն տեսակի կասկածները, մինչև անգամ սպանված աղաֆնին ել ուղարկեցին Ստոկհոլմ։ Ողային սուրհանդակը, վոր յեկել եր Արկտիկայի անհայտ խորքերից, անվիճելի, սակայն առայժմ, ավագ, Անդրեյի միակ լրաբերն եր։

Նրա տոմսակի մեջ յերկու հանգամանք մի ինչ վոր անհանգստություն եյին պատճառում։ Առաջինը, ողապարիկը



Միակ աղաֆնին, վոր բերել հասցրել է Անդրեյի նամակը։

ինչ վոր դեպի արևելք։ Այն ժամանակ սկսեցին մտածել, վոր «Արծիվը» կարող ե իջնել և Սիրիերում։

Այլևս վոչ Անդրեյից և վոչ ել նրա ուղեկիցներից վոչ մի լուր չկար։

Անցավ ձմեռը։ Նորից յեկավ ամառը։ Ճանապարհորդներինց վոչ մի տեղեկություն չկար։ Արդեն մի տարին լրանում եր այն որից, յերբ «Արծիվը» և իր ուղեկիցները անհետ անհայտացան։

1898 թ. ոգոստոսին, շվեդական կառավարությունը ուղարկեց Շպիցբերգենի ջրերը «Անտարկտիկա» նավը, իսկ նրա վրա — հատուկ եկապեղիցիա, վորին հանձնարարված եր Անդրեյի հետքերը գտնել։ Ոգոստոսին և սեպտեմբերին

րիկը չափազանց դանդաղ եր թռչում։ Յերկու որվա մեջ նա առաջացել եր դեպի հյուսիս միայն 250 կիլոմետր։ Յեթե Անդրեյի իսկական տեղեկությունը չլիներ, այն ժամանակ վոչ վոք զրան չեր հավատա, այնքան դա քիչ եր։ Յերկրորդը, քամու ուղղությունը բոլորովին փոխվել եր և նա քշում եր ողապարիկը

ծովը Շպիցբերգենի շուրջը մատչելի յե լինում լողալու համար, և փրկության եկապեղիցիան առանձին դժվարություններ չեր զգում սառույցներից։ Յերբեմն միայն Շպիցբերգենից դեպի արևելք ճանապարհին ահագին սեղանաձև ման այսբերգներ* եյին պատահում, վորոնց վերջրյա մասը յերբեմն «Անտարկտիկի» կայմերից բարձր եյին։ Հյուսիսային քամին, ձյունը և մառախուղները նույնպես ստիպում եյին զգուշ լինել։

«Անտարկտիկան» շրջեց ամբողջ Շպիցբերգենյան արշիպելագը։ Առանձնապես եկապեղիցիան ուսումնասիրեց նրա ամենախուլ անկյունները։ Իմիջի այլոց նա այցելեց և Սպիտակ կղզին, վոր այդպես ե կոչվում, իրեն հոծ ծածկող ցամաքային սառույցե գմբթի համար։ Բայց վոչ մի տեղ, բնավ, վոչ մի տեղ Անդրեյի եկապեղիցիայի ամենափոքր հետքն անգամ չկար։ Չկային նրանք և Գրենլանդիայում, թեև այնտեղ նավող կետորսները նայում եյին Գրենլանդիայի բոլոր ծակածուկերը։

Անցավ դարձյալ մի տարի։ Յեվ նորից կարծես Անդրեն փորձել եր իր մասին տեղեկություն տալ։ Ամառը 1899 և 1900 թվերին Իսլանդիայի և հյուսիսային Նորվեգիայի ափերի մոտ ծովը բերել եր հինգ բույոկներ, վորոնց վրա կարելի յեր նշմարել կիսաջնշած մակադրությունը։

ԱՆԴՐԵՅԻ ԲԵՎԵՌԱՅԻՆ ԵԿՍՊԵԴԻՑԻԱ

Միայն դրանցից յերկուսի մեջ գտնվեցին կարճ տոմսակներ Անդրեյից։ Սակայն վոչ մի նոր բան նրանք ասել չեյին կարող — նրանք ավելի վաղ եյին գրված, քան աղավնու բերած նամակը։ Մյուս բույոկները դատարկ եյին։ Հաս յերևույթին ողաջուները դուրս եյին գցել նրանց, ինչպես ավելորդ բալաստ։

Դրանք վերջին յուրերն եյին եկապեղիցիայից։ Իսկ մյուս յուրերը նրա մասին հակասական և քիչ հավատալի եյին — ավելի շուտ յենթադրություններ եյին, յերբեմն հիմնված

* Այոպերգ — լողացող ստոցե լեռ ե, Ջրի վրա սովորաբար դուրս ե ցցվում փոշավիլի քան այսբերգի ութերորդ մասը։ Իսկ մնացած գտնվածն ընկղմված ե ջրի մեջ։ Այսբերգները հարթ գագաթով կոչվում են սեղանավոր։

* ձիշտ պատկերավորումը, տ. 41 յերես։

ամենաֆանտաստիկ լուրերի վրա: Յերբ Անդրեն պատ-
րաստվում եր ճանապարհ ընկնել, Կանադական կառավա-
րությունը հայտարարություն ուղարկեց հեռավոր հյուսիսի
իրենց նոսր գաղութներին առաջիկա ողային եկապեղի-
ցիայի մասին: Հայտարարությունների մեջ կոչ եր արված
բնակիչներին ոգնելու ողաչուններին այն դեպքում, յեթե
«Արծիվը» իջնի կանադական սահմաններում: Կանադակա-
նից հետո նույնն արեց և այն ժամանակվա ռուսական
կառավարությունը: Նրա հայտարարությունների մեջ սու-
ված եր, վոր շվեդական թագավորը կպարգևատրի նրան,
ով կոչնի նեղ զրության մեջ ընկած ողային ճանապար-
հորդներին:

Նավորդից նավորդին, արդյունաբերողից արդյունաբե-
րողին, վորսորդից վորսորդին անցավ լուրը անհայտ կորած
ողապարիկի և մարդկանց մասին: Ողապարիկի մասին գիտե-
լին և ամերիկյան եսկիմոսները և Սիբիրի բնիկները: Նրա
համբավը հասել եր սառած բեվեռային ծովերի ափերից
Սիբիրի տայգաների խորքերը: Սիբիրի խուլ գաղութներում
ժողովուրդը խոսում եր, թե աքսորից մի հայտնի հեղափո-
խական և փախել, Անդրեյ անունով, և վոր նրան բռնելու
համար թագավորը խոստացել ե մեծ պարգև տալ: Սակայն
«Անդրեյը» մեծ հնարագետ ե — փախել ե վոչ հասարակ
կերպով, այլ ոգով և զրա համար, իբր թե, պիտի լավ նա-
յել Մի քանի տեղերում ուրյա խնդիրները* ամեն մի կասկա-
ծելի մարդու մեջ վտանգավոր «Անդրեյին» եյին տեսնում
և խոստացած պարգևն ստանալու համար, յեռանդով ձեր-
բակալում եյին բոլոր, աչքերին ընկած, անապաստան թա-
փառականներին:

Խորհրդավոր ողապարիկի մասին լուրը հասավ հեռու
Սախալինը: Ասում եյին, իբր այնտեղ ապրող աքսորված
տաժանակիրները տեսել եյին, ինչպես ողի միջով մի վառ-
վող գունդ սլացավ: Հավանական ե, վոր դա մի հասարակ
մետեոր եր:

Իսկ հյուսիս-ամերիկյան եսկիմոսների մեջ շատ տարի-
ներ առասպել եր պատում այն մասին, թե ինչպես մի որ
նրանց մոտ յերկնքից իջավ մի մեծ վրան: Նա թռչում եր

ողի մեջ, ինչպես թռչուն: Շինած եր նա բարակ կաշվից,
վոր նման չեր գազանի մորթու: Վրանի մեջ ապրում եյին
յերեք սպիտակ մարդ: Այդ լուրերի համաձայն եսկիմոսները
այդ մարդկանց զրել եյին չար հողիների տեղ և սպանել
եյին:

Բայց չե վոր և կետորս «Մալմիկից» հայտնել եյին,
վոր տեսել են ողապարիկը Գրենլանդիայի ափերի մոտ:
Զլինի թե, հենց նրան եյին եսկիմոսները անվանում թրո-
չող վրան: Յեվ հյուսիսի մի քանի հետազոտողներն սկսեցին
յենթադրել, վոր «Արծիվ» արշավախումբը կործանվեց մի
վորե հյուսիս-ամերիկյան բեվեռային արշիպելագի շրջա-
նում: Սակայն այդ ապացուցել անհնարին եր Ողաչուններն
անհայտ կորան:

Արկտիկայի առեղծվածներին ավելացավ դարձյալ մեկը.
Անդրեյի և նրա ուղեկիցների վիճակը:

ՍՊԻՏԱԿ ԿՂԶՈՒ ՎՐԱ

1930 թ. ամառը Արկտիկայում հազվագյուտ տաք եր:
Բևեռային ծովագնացները պատմում եյին, վոր այդպիսի
տաք յեղանակ այնտեղ արդեն վաղուց չեր դիտված: Սա-
ռույցները, վոր պատել եյին Շպիցբերգենի կղզիները,
նոսրանում եյին, սկսում եյին փխրանալ և հետ եյին
քաշվում դեպի հյուսիս և արևելք: Նրանց մեջ ավելի ու
ավելի հաճախ պատահում եյին մեծ հալվածքներ: Հալվածք-
ները միանում եյին և դառնում անագին ազատ ծովի տա-
րածություններ, և նրա մոլթ սառը ջրերն արդեն ծփում
եյին գլետչերներով պատած բեվեռային արշիպելագի
շուրջը:

Ոգոստոսի սկզբին նրանից արևելք անցնում եր նոր-
վեգական արդյունաբերական մոտորային շկունա «Բրատ-
վոգը»: Նավի յեզրին գտնվում եր զոկտոր Հորնի գիտա-
կան եկապեղիցիան: «Բրատվոգը» գնում եր դեպի Փրանց
Իոսիֆի Յերկիրը: Եկապեղիցիան պիտի այնտեղ զբաղվեր
գիտական հետազոտություններով, իսկ շկունի խումբը —
ծովացուլի և փոկի վորսով: Հրվանդանից հրվանդան, կրդ-
զուց կղզի նավում եր բևեռային նավը, և նրան չեյին
կանգնեցնում հավիտենական թանձր մառախուղները, վո-

* Այն ժամանակամիջոցի վոստիկանության ցածր պաշտոնյաները:

րոնք ծանր շերտերով սողում էյին անապատային Բարենցի ծովի մակերևույթի վրա: Հիմա նավը ուղևորվում էր դեպի քիչ մատչելի և համարյա չուսումնասիրված Զիլլեսի Յերկիրը: Նորվեգացիք նրան անվանում են Սպիտակ կղզի: Սպիտակ կղզին գտնվում է Շախցերգենի և Ֆրանց Իսիֆի Յերկրի միջև: Նրա կոորդինատներն են $80^{\circ} 10'$ հյուսիսային լայնություն և 32° արևելյան յերկարություն:

Ոգոստոսի 5-ի յերեկոյան մառախուղը հանկարծ ցրվեց և «Բրատվողի» արշավախումբը տեսավ հրաշալի տեսարան: Նավի հանդեպ լողում էր հսկայական փայլուն սպիտակ վահան: Դա Սպիտակ կղզին էր: Նա ամբողջովին ծածկված էր միապաղաղ սառցադաշտով, վորը նրա վրա շաղկապիչ-սպիտակ տափակ գմբեթ էր կազմել դեպի ծովը գահավիժող ուղղահայաց պատերով: Ծովը հայելու նման էր, արևը փայլում էր: Կղզու շուրջը, կարծես նրա պահապանները լինեյին, բարձրանում էին ահագին ստամուխաներ*, վոր «Բրատվողի» համար ծառայում էյին, վորպես ծանծաղ տեղերը նշող փարոսներ: Կղզու հարավ-արևմտյան ափն ազատ էր սառույցներից և մութ շերտով դուրս էր գալիս գլետչերի կապտավուն սպիտակ յեզրի տակից: Զգուշությամբ շարժվելով և բոլոր ժամանակ խորությունը չափելով, «Բրատվողը» մոտեցավ կղզուն և խարխիս զցեց ափից մոտ կես մղոն հեռու: Մոտորային նավակով եկսպեդիցիային մասնակցողները դուրս յեկան ցամաք:

Բևեռային ամառվա յեռուն ժամանակն էր: Քարքարոտ ափը հալվել էր մինչև գլետչերի ստորոտը և կտրատված էր խոխոջող առվակներով: Տեղ տեղ, չորացած մասերում մամուռ էր բուսել, իսկ բարձրագիւր տեղերում վխտում էյին «թռչունների շուկաները»: Խոր լուսթյուն էր տիրում շուրջը: Այդպիսի լուսթյունը լինում է միայն բևեռային յերկրներում, կամ բարձր լեռների գագաթներին: Միայն խոլ բովերյունը, վոր լսվում էր սառցադաշտից, խանգարում էր դրան:

Դա հսկայական սառցաշրջաններն էյին աղմկում, Պոկվելով գլետչերից, նրանք թափվում էյին ծովը և շարունակում էյին լրենց ճանապարհն արդեն այսբերդի ձևով:

* Ստամուխան - ծանծաղուտի մեջ խրված այսբերդ:

Փոքրիկ ծովախորշիկում հետազոտողները գտան ծովացուլերի մի հոտ: Գիտնականները վերջացրին իրենց աշխատանքը և վերադարձան նավը, իսկ առավոտյան նշանակված էր վորսը:

Յեկավ ոգոստոսի 6-ը: Յեղանակը շարունակում էր հիանալի լինել: Բաց կապույտ յերկրնքն անամպ էր, արևը պայծառ լուսավորում էր: Ծովացուլերին խփում էյին նավակներից: Մորթած անասունների կտրատումը կատարվում էր ափին: Նավաստիները հոգնել էյին ծանր աշխատանքից: Նրանցից յերկուսը Սալենը և Տյուսվիկը գնացին կղզու խորքը խմելու ջուր փնտռելու: Ափից մի յերկուհարյուր մետր հեռանալով, նրանք հանդիպեցին պարզ առվակի, և Ուլավ Սալենը կռացավ ջուր խմելու: Հանկարծ նա ուղղվեց, հետ դարձավ և ձայնն իջեցնելով ասաց իր ընկերոջը.

— Տեսնում ես, Կարլ:

— Տեսնում եմ: Բայց դա ի՞նչ է նշանակում:

Գետափին, ավազի վրա ընկած էր այդ տեղերի համար անսովոր առարկա — ալումինի կաթսայի կափարիչ: Յերկու նավաստիներն սկսեցին շրջահայել այս ու այն կողմը: Իրենցից մի քանի քայլ հեռու, հալած ձյունի տակից ցրցված էր մի ինչ վոր մութ բան: Անուշադիր հայացքը դա ևս կրնդուներ դուրս պրծած քարի սուր ծայրի տեղ: Նավաստիները մոտեցան և տեսան փոքր բրեզենտե նավակի ծայրը, կիսից հետ թաղված ձյան մեջ:

Սառույցի և ձյան հետ խառնված նրա մեջ ինչ վոր էրեր էյին գտնվում: Ամենից առաջ նավաստիների աչքին ընկավ կարթածողը: Նրանք վերցրին և սկսեցին քննել այն: Նա շինած էր արույրից և ժամանակից կանաչել էր: Կարթածողի վրա փորագրած էր.

ԱՆԴՐԵՅԻ ԲԵՎԵՌԱՅԻՆ ԵԿՍՊԵԴԻՑԻԱ

Հենց վոր Սալենը և Տյուսվիկը ջոկեցին այդ ամբողջ Սկանդինավիայում հայտնի անունը, սրարշավ հետ վազեցին դեպի ափը:

— Ե՛յ, տղաներ, յեկեք, յեկեք, — շնչակտուր ճչում էյին նրանք իրենց ընկերներին: — Այնտեղ նավակը: Անդրեյի նավակը:

Վորսորդները խմբով շարժվեցին դեպի գյուղտուր: Շուտով նրանց մոտեցավ և «Բրատովոգի» նավապետ Ելիասսենը: Իմաց տվին նավին և այնտեղից յեկավ ինքը Հորնը— բարձրահասակ, նիհար, կորացած շիկահեր մարդ, և եկսպեդիցիայի մյուս գլխավոր աշխատակիցները: Նրանք իրենց հետ բերեցին քլունգ, լինգ, բահեր և սկսեցին զգուշութամբ փորել ձյունը և սառույցը այն տեղի շուրջը, վորտեղ գտնված էր նավակը:

Նավակն ազատեցին նրա ծածկող ձյան կույտից և սկսեցին ջնկել նրա մեջ գտնվող գույքը:

Ոոր հուզում տիրեց հետազոտողներին: Լուռ և կենտրոնացած նայում էին նրանք վաղուց իվեր կործանված եկսպեդիցիայի իրերը: Նավաստիների մի փոքրիկ բազմություն խմբվել էր շուրջը: Նրանք միայն հազիվ լսելի ախ էին քաշում, յերբ Ելիասսենը և Հորնը սկսեցին նավակից մի իրը մյուսի հետևից հանել: Երկու հրացան, փամփուշտներով արկղ, պարանների կծիկներ, լուցկիներ, կոնսերվներ, փայտե տուփեր կողմնացույցով և սեկստանտով* և բազմաթիվ ուրիշ մանր իրեր, վոր պետք են արշավանքի ժամանակ: Այստեղ էր և Սորինդերգի գրպանի որացույցը, ամբողջովին ծածկված հետազոտությունների թվերով և նկատողություններով:

Մի քանի իրեր սառել էին, մյուսները ժանգոտել, ուրիշները խաղիսկած էին և տրորված— սպիտակ արջերն այստեղ հիմնովին տիրություն էին արել: Իսկ բոլորը միասին ամբողջովին ներծծվել էր բազմապա յերեսուն յերեք բեռնային գարունների խոնավությամբ:

Նավակը կապված էր սահնակին, վոր առաջը սառել էր սառցի մեջ: Մեծ դժվարություններով նրանց այնտեղից կտրեցին:

— Անդրեյի եկսպեդիցիայի իջեվանն այստեղ է յեղել, դա անկասկած է, — կամաց ասաց ղոկտոր, Հորնը նավապետ Ելիասսենին: — Շարունակենք վորոնումները:

Դանդաղ շուրջը ման գալով, «Բրատովոգի» մարդիկ աստիճանաբար քայլ առ քայլ հանում էին ձյան տակից մերթ կտոր կտոր ճղված մահուղե շալվար, մերթ թաշկի-

նակ «Ն. Ս.» նշաններով, խուճապած կարմիր թելով ասեղնագործած, մերթ սառույցի մեջ սառած արշավանքի դեղարկղը:

Սառույցով ծածկած գրանիտե դարավանդը, վորտեղ հայտնվել էր եկսպեդիցիայի իջեվանը, գնում էր դեպի վեր և փակվում ժայռոտ շղթայով: Շղթայի ստորոտին ժայռի խորշի վրա թափթփած էր զգեստների մի կույտ: Իր ձևերով նա հիշեցնում էր փռված մարդկային մարմին: Հագուստի տակ, մեջքը սառած ժայռին հենած, պառկած էր անգլուխ մի կմախք: Նրա վորտքերին ծանր բեռնային կոշիկներ էին: Նրանք սաստիկ մաշված էին: Գուլպաները, թաթպանները, բաճկոնը, թեև արջերը պատառոտել էին, սակայն բավական լավ էին մնացել: Գլուխները բաց, ծովագնացները և գիտնականները լուռ կանգնած էին սարսափելի գյուտի շուրջը: Նավապետ Ելիասսենը բարձրացրեց բաճկոնը և սկսեց նրան ղիտել: Նրա կիսամաշ աստառի վրա կարելի էր կարգալ ասեղնագործ վենգելը (անվան սկզբնատառերը):

Ս. Ս.

Ս. Ս... Սոլոմոն Անդրե... Սհա ում աճյուններն էին գտնվում, մինչև հոգու խորքը ցնցված հետազոտողների առաջ: Անդրեյի դիակի կողքին ժայռին դեմ տված, դրած էին փոքրիկ կացինը և հրացանը, կարծես թե հանգուցյալը հենց նոր ձեռքին բռնած լինեք դրանց: Այդտեղ էլ դրված էին ալյումինե կաթսան և պրիմուսը: Նավաստիներից մեկը վերցրեց պրիմուսը ձեռքը և թափ տվեց: Լրսվում էր, ինչպես նրա ղեկավարի մեջ շարժվում է հեղուկը: Նավաստին ող մղեց և մի բարակ շթի նավթ դուրս թռավ այրիչի անցքից:

Անդրեյի զգեստի տակ պահված էին յերկու ծոցատետրեր, բրդե սփտերի մեջ փաթաթած: Նրանք սաստիկ թրրվել, սառել էին, և նրանց մեջ ջնկել մի վորևե բան կարելի չէր միայն մեծ դժվարությամբ:

Վորոնումը շարունակվում էր: Մի քանի պակասող կմախքի վրասորները գտնվեցին հենց այդտեղ, իջևանի մոտ: Նրանց, ինչպես յերևում է, վայրի գազաններն էին

* Լայնություն չափելու գործիք:

քաղաքներ, իսկ մի քառասուն քաղ Անդրեյից հեռու ժայռերի միջի ճեղքվածքում, նավաստիները նկատեցին գլաժայռերի կույտերի տակից դուրս ցցված մեկի կոշիկները:

Նավաստիները ցրեցին քարերը: Ամուր սղմած իր սառցե գերեզմանի մեջ, պառկած եր յերկրորդ կմախքը: Յերը նրան կտրեցին սառույցից, մատին գտան վոսկե մատանի, վորի ներսի կողմում փորագրած եր Ստրինդբերգի անունը:

Կործանված ողաչունների աճյունները դրվեցին շտապ շինած դագաղների մեջ և բոլոր գտնված իրերի հետ տարվեցին «Բրատվոգի» նավեզրը:

Մյուս որը նավը շարունակեց արդեն իր ճանապարհը դեպի Ֆրանց Իոսիֆի Յերկիրը:

Իսկ Սպիտակ կղզու վրա, այն տեղում, փորտեղ այնքան տարի պառկած եր մնացել Անդրեյի դիակը, «Բրատվոգի» նավորդները շարեցին քարերի մի սրածայր կույտ: Նրա մեջտեղում մի բարձր փայտե ձող ամրացրին: Նա յերեվում եր ծովից շատ հեռու: Այդ հուշանշանի տակ պահված ե ամուր փակած մի շիշ, վորի մեջ դրված ե մի տոմսակ:


Այստեղ Ֆրանց Իոսիֆ Յերկիրը մեկնող նորվեգական եկապեղիցիան «Բրատվոգ» մոտորե նավակով (Ուեստհայից) Պեդեր Ելիասսենի հրամանատարության տակ գտավ Անդրեյի շվեդական եկապեղիցիայի մնացորդները:

Սպիտակ կղզի
ոգոստոսի 6, 1930 թ.

Գուլնար Հոբե

Վիկտորիա կղզու մոտ «Բրատվոգին» հանդիպեց «Տերնինգենը», վոր նավապետ Իենսենի հրամանատարության տակ գնում եր Տրոմսյու: Յերկու շաբաթից հետո ամբողջ աշխարհը գիտեր արդեն, թե ինչ ե պատահել Սպիտակ կղզու վրա, և անհամբերությամբ սպասում եր «Բրատվոգի» վերադարձին իր տխուր բեռով: Իսկ Հորնի եկապեղիցիայի հետքերով սլանում եր արդեն մի ուրիշ նավ:

Ոգոստոսի 27-ին Տրոմսյուից դուրս յեկավ և մեկնեց դեպի Սպիտակ կղզին մոտորե նավ «Իսթյերնը»: Հարուստ



Անդրեյի ճամբարի պահը Սպիտակ կղզու վրա, Գուլնար Հոբեի կողմից նշանակված ե գրությունները: Պեդեր Ելիասսենի հրամանատարության տակ գտնված եր Ստրինդբերգի անունը:

«Անդրեյի ճամբարի պլան» նկարի բացատրությունը:

- | | |
|---|--|
| Ա. Այն, ինչ վոր գտնված է նավակի շուրջը | Բ 6. Զգեստի մասեր |
| Ա 1. Բրեզենտե հավակ իրերով | Բ 7. Ապակյա շշեր |
| Ա 2 — 3 Սահնակներ | Բ 8. Ֆրենկելի դիակը |
| Ա 4 — 6. Կանադական դահուկներ | Բ 9. Գանգ |
| Ա 7 — 8. Զամբյուղների հատակներ | Բ 10. Գանգ |
| Ա 9. Փամփուշտներով արկղեր | Բ 11. Քնապարկ |
| Ա 10. Լուսանկարչական պլյոնկաների պարկ | Բ 12. Լուցկիներով տուփ |
| Ա 11. Բամբուկի ձող | Բ 13. Տուփ կարի պարզ գանգով և դրամով |
| Ա 12. Քառանկյունի թիթեղաման | Բ 14. Զամբյուղի հատակ |
| Ա 13. Արկղ պսիլոմետրով (ողի խոնավությունը չափելու գործիք) | Բ 15. Արշավանքի դեղատուփը |
| Ա 14. Շալվար | Բ 16. Ֆրենկելի թղթապանակը |
| Ա 15. Սպիտակ արջի մորթի | Բ 17. Սղոց |
| Ա 16. Փռկի մեջքի վոդնաշարը | Բ. Վրանի առաջ |
| Ա 17. Թաշկինակ նշանով «Ն. Ս.» | Բ 1. Խոհանոցի տպարատի մոտը |
| Ա 18. Ոգտապարիկի թաղանթի կտորը հազուստի մասերի և ութ առարկաների հետ | Բ 2. Փամփուշտներով արկղ |
| Բ Վրանի յենթագրված տեղը | Բ 3. Արշավանքի դեղատուփը |
| Բ 1. Անդրեյի դիակը | Բ 4. Մարդկային կմախքի մի մասը |
| Բ 2. Կաթսա | Բ 5. Բահ |
| Բ 3. Ալյումինե թաս | Բ 6. Զեպքի վոսկոր |
| Բ 4. Պրիմուս | Բ 7. Վոտի թաթ |
| Բ 5. Հրացան | Բ 8. Խաբիսի |
| | Բ 9. Սպիտակ արջի մորթի |
| | Գ Մոկից կղզի բերած գերաններ |
| | Դ Հորնի հուշանշանը, մոտավորապես 200 մետր ափից: |

շվեդական լրագիր «Դագենս նիխտեր» («Որվա նորություններ») ֆուստեց* «Իսթերնը» և ուղարկեց նրանով իր սեփական թղթակից Կնուտ Ստուբբենդորֆին*, միանգամ ևս ուսումնասիրել հեռավոր բեռնային կղզին՝ վոր դարձել եր Անդրեյի եկապեղիցիայի գերեզմանը:

Սեպտեմբերի 5-ին «Իսթերնը» արդեն մոտենում եր Սպիտակ կղզուն: Ստուբբենդորֆը և նրա ուղեկիցները գուրս յեկան ափ և խնամքով հետազոտեցին Հորնի հուշանշանի շուրջը:

Այն ժամանակվանից, ինչ Հորնը այցելել եր այդտեղ, անցել եր մի ամիս: Քարքարոտ հրապարակում, վորտեղ յերբեմն յեղել եր Անդրեյի ճամբարը, սառույցը համարյա հալվել եր: Այն, ինչ վոր առաջ ծածկում եր իր առակ յերկու մետրանոց ջերտը, յեկել եր դուրս: Այն տեղին կից, վորտեղից գտել եյին Անդրեյի դիակը, պառկած եր Ֆրենկելի կմախքը, իսկ նրա մոտ՝ սառած քնապարկը: Սպիտակ բաց կապույտ յեզրագարդ բրդե վերմակի ցնցոտիները ծածկում եյին Ֆրենկելի կմախքը: Յերբ սկսեցին ուսումնասիրել նրա հագուստը, պիշակի զրպանից, հուշատետրի մոտ, գտան անվնաս մնացած «հափտենական» գրիչը: Նրա մեջ նույնիսկ թանաք կար:

Ստուբբենդորֆը և «Իսթերնի» նավաստիները գտան ևս շատ ուրիշ, կործանված ողային եկապեղիցիայի կահավորումի առարկաներ: Բայց ամենահետաքրքիր ներանց գյուտը մետաղյա ֆուտլյարներն եյին, վորոնց մեջ զրված եյին ջրով ներծծված, սակայն անվնաս մնացած լուսանկարչական թաղանթի կոճիկները:

Այն տեղում, վորտեղ գտնված եյին Անդրեյի և Ֆրենկելի կմախքները, հաջողվեց նույնպես գտնել վրանի հետքեր: Վոչ հեռու ընկած եր մի գանգ, վոր ինչպես հետո պարզվեց, պատկանում եր Անդրեյին: Սեպտեմբերի 2-ին «Բրատ-վոգը» վերադարձավ Տրոմսյո, իսկ յերկու շաբաթից հետո, նրա հետևից յեկավ «Իսթերնը»: Տրոմսյոյում նրանց սպասում եր շվեդական կառավարական հանձնաժողովը, վոր բաղկացած եր զիտնականներից: Այնտեղ յեկան Անդրեյի

* Ֆուստեց — կնշանակե վարձեր

** Թղթակից Ստուբբենդորֆը հուլիվեց խորտակված դերիժարը «Իտալիայի» եկիպաժի վորոնումների ժամանակ, 1928 թ. ամառը:

քրոջ փորդին, Սարինդերգի յեղբայրը և Յեվրոպայի ու Ամերիկայի բոլոր ծայրերից յեկած թղթակիցների մի ամբողջ բազմություն: Կոմիտիան ճիշտ փորձեց մեռնողներից ունի և պատկանում աճյունները և առանձին մարդկային փոսկորները, և մանրամասն նկարագրություն կազմեց բոլոր դուլքի, փոր գտնվել եր Սպիտակ կղզու վրա: Իսկ հետո յերեք դազադը տարվեց նրանց հետևից ուղարկած հրետաձիգ նավակը «Սվենսկստունդը» — նույն նավը, փորի վրա յերեսուն յերեք տարի առաջ Անդրեն, Սարինդերգը և Ֆրենկելը, կյանքով և հույսերով լի, նավում եյին զեպի Շպիցբերգեն: Հենց նույն նավով նրանք կատարում էին իրենց վերջին ուղին:

«Սվենսկստունդը» տարավ նրանց Ստոկհոլմ: Թնդանոթների զորդյունի տակ, ռազմական պատվով, սգահանդեսը շարժվեց շվեդական մայրաքաղաքի փողոցներով: Հարյուրհազարավոր ամբոխը ճանապարհում եր կործանված ողաչուններին: Նրանց տարան կրեմատորիում: Հոկտեմբերի 9-ին նրանց աճյուններն այրվեցին:




Իսկ ինչ փոր գտնվել եր Սպիտակ կղզու վրա, հանձնեցին Ստոկհոլմի իսանդարանը*:

Ամեն տեսակի զգուշություններով, բառիս բուն նշանակությամբ թերթիկ-թերթիկ, կորածների որատետրերը, արանքները ձծողական թուղթ զրած, չորացրած էյին: Դրանից հետո մասնագետ զիանականներն սկսեցին նրանց վերականգնեցնել և մեկնել: Շատ ձեռագրերը ժամանակից, խոնավությունից և բորբոսից կամ բոլորովին ջրնշվել էյին, կամ հաղիվ էյին կարգացվում: Այնուամենայնիվ Անդրեյի մի հուշատետրը և Սարինդերգի «հետազոտությունների թերթը» բավականին լավ էյին մնացել:

Հետո ձեռք առան լուսանկարչական թաղանթները, փոր Անդրեն եր լուսանկարել: Չնայած նրան, փոր զրանք յերեսուն յերեք տարի մնացել էյին սառցի և խոնավության մեջ, հույս կար նրանց մշակելու: Շվեդական լուսանկարիչ Սերբեցերգը համբերությամբ, սրամտությամբ և զործի հմտությամբ հրաշքներ ցույց տվեց, մինչև փոր նրան հաջողվեց այդ թաղանթներից «գուլըս կորգել»

* Այդ իրերի մի մասը նկարած և յերես 45-ում:

լուսանկարներ: 190 նկարներից միայն 50 հատը գուլըս յեկան փորքը իշատե պիտանի մշակման համար և միայն



Սպիտակ կղզու վրա գտնված իրերը: Վերելք — կարթաձողերը, խարիօթը, կշեռքը և փորորդական սուրճիները: Մեջտեղում — կոճիկները լուսանկարչական թաղանթներով և նրանց պարկը: Ցածում — խոհանոցի պարագաները:

20-ը զրանցից գուլըս յեկան այնչափ հստակ, փոր նրանցից կարելի էր պարզ նկարներ ստանալ:

Անվնաս մնացած որատետրերի թերթերը և լուսանկարչական պատկերները հնարավորություն տվեցին իմանալու, թե ինչ եր պատահել Անդրեյի եկսպեդի-

ցիային մասնակցողների հետ Վիրգո ծովախորշից թռչելուց հետո մինչ այն ժամանակ, յերբ նրանք ընկան Սպիտակ կղզու վրա, վորտեղ և գտնվեցին նրանց ղիակները:

ՄԱՌԱԽՈՒՂԻ ՅԵՎ ՍԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՏԱԿ

Մառախուղը ողաչունների ամենավտխերիմ թշնամին ե: Բայց առավել վտանգավոր են արկտիկական մառախուղները: Ամառվա ամիսները նրանք կախված են ժամերով, իսկ յերբեմն և որերով և ամեն ինչ ծածկում են անթափանցիկ և խոնավ քողով:

Յերբ 1897 թ. հուլիսի 11-ին «Արծիվը» ծածկվեց հեռանդների աչքից, վոր մնացել էյին Դանիական կղզու վրա, սլացող անրոստատին հանկարծ վրա հասավ սառը մառախուղի ակիքը: Փափուկ պատանքով նա ընկավ ողապարիկի վրա և պատեց նրան ամբողջովին:

Շպիցերգեղենի հեռավոր ափերը, ցածուժ տորոսները, քիչ առաջ զեռ բաց կապույտ յերկինքը բարձրում — ամեն ինչ անհայտացավ միակերպ, մոխրագույն պղտորության մեջ: Մանրամաղ անձրևը մանր կաթիլներով ծածկեց մակույկը և թաղանթը:

Փափուկ ներխուժելով մառախուղի զեղնագույն շիթերի մեջ, ողապարիկը թռչում եր զեպի հյուսիս: Շուրջը խաղաղ եր: Դայրբողների խշշոցը ձյան վրա, առաքաստների աղմուկը և զամբյուղի ճռոցը միակ ձայներն էյին այդ հավիտենական լուության մեջ: Յերբեմն միայն լրսվում էյին մակույկի մեջ մարդկանց խուլ ձայները:

Միայն հիմա ողաչուններն զգացին, թե վորքան հոգնած են, նախ մեկնումի հուզմունքից, անքուն գիշերներից, հարավային քամուն սպասելուց և «Արծիվ» սարքավորելու ծանր աշխատանքից: Նրանք հերթով մտնում էյին իրենց նավասենյակը և սպանվածի նման քնում, իսկ մնացած ժամանակը գիտական հետազոտություններ էյին կատարում և գիտողություններ էյին գրում իրենց հուշատետրերի մեջ, կամ թե չե տաքացնելով կերակուրը կախ տված խոհանոցում, ակորթակով նախաճաշում էյին: Յուրտ եր, ջերմաչափը գերո աստիճան եր ցույց տալիս և ուտելիքը միակ միջոցն եր տաքանալու:

Ուժեղ հարավային քամին, վոր ողապարիկի մեկնելու ժամանակ թվում եր թե յերկար կտևի, սկսեց մեղմանալ, իսկ հետո փոխեց ուղղությունը և ողապարիկը տարավ դեպի արևմուտք: Բայց ավելի վատ եր այն, վոր խոնավությունը, վոր ծածկում եր ողապարիկի թաղանթը, կախ եր ընկած ծանր բեռով և քաշում եր նրան ցած: Ժամանակ առ ժամանակ մակույկն սկսում եր «տպել», այսինքն խփում եր իր հատակով ձյանը, վոր ծածկում եր սառցադաշտերը: Ողաչուններն անդադար բալաստ և ավելորդ իրեր էյին դուրս զցում, սակայն այդ համարյա չեր ոգնում: Մառախուղը շարունակում եր շրջապատել անրոստատը և ակելի ու ակելի ծանրացնում եր նրան իր խոնավությամբ: Ծանրացած ողապարիկը, վորին թույլ ցընցումներով հաղիվ եր տանում քամին, դանդաղ շարժվում եր այդ թանձրացած ջրային գոլորշիների միջով: Շուտով, թուխքից հետո, ողաչունները կապեցին կտրտված գայդրոպները ճոպաններով, վոր վերցրել էյին վորպես պաշար, սակայն ավյալ դրության մեջ, գայդրոպներն ու առաքաստներն ել միայն անոգուտ ծանրություն էյին:

Այսպես անցավ յերկու օր:

Հուլիսի 13-ի գիշերը, քամին բոլորովին դադարեց: Կատարյալ խաղաղություն տիրեց: Տասներեք ժամ «Արծիվը» տեղից չշարժվելով, կանգնած եր 30 մետր բարձրության վրա: Միապաղաղ լուությունը ողում անվերջ կախված պահին, ընդհատվում եր միայն ցածից լսվող ձգյուններով: ճայթում էյին մշտական շարժվող սառցադաշտերը: Մառախուղը նոսրացավ, իսկ անագին ողապարիկը շարունակում եր անշարժ կախված մնալ միևնույն տեղում: Ներքևում սպիտակ արջը մոտեցավ վերևից իջնող գայդրոպին, վոռնաց, սարսափած մի կողմ նետվեց չտեսնված հրեշից և կորավ մառախուղի մեջ:

Վերջապես նորից քամին փչեց: Անդրեն նայեց կողմնացույցին, — այս անգամ անրոստատը թռչում եր արևելք: Մառախուղը ցրվեց: Դուրս յեկող արևն սկսեց ողապարիկը տաքացնել: Արագ բարձրանալով, նա հասավ 500 մետր բարձրության: Յածը փաված եր անհուն սառցե տափարակը, վոլորապտույտ ճեղքերի սև ժապավեններով կտրտած:

Սակայն «Արծվի» դիմաց գալիս եյին մառախուղի նոր ալիքներ, և կարճ միջոցից հետո, ողապարիկը նորից թռչում էր նրա սառը մշուշի մեջ: Աերոստատն ամբողջովին ծածկվեց յեղյամով, վրայի ճուղանները սառեցին: Իսկ ամենափոքր սառցե կեղեր, ընդամենը մի միլիմետր հաստության, ամբողջ թաղանթի մակերևույթի վրա — ավելորդ տոննա յե: Մառախուղը և ցուրտը միանալով սառույցի գործարան գոյացրին, վոր սարսափելի մշտակալությամբ էր գործում:

Ողապարիկը նորից ցածրացավ: Նա թռչում էր արդեն սառցի մակերևույթին մոտ և նրա մակույկն ամեն ընդունակ էր դուրս պրծած տորոմների: Նրա մեջ գրանվողներին առաջ ու հետ էր գցում, ինչպես ծովի վրայի սրորումի ժամանակ: «Արծվի» եկիպաժը տանջվում էր ծովային հիվանդությունով, Անդրեն սպստիկ վերավորել էր գլուխը: Ողաչունները բարձրանում էին տանող ողակի վրա և այնտեղ հանգստանում մակույկի հարվածներից և զարկերից:

Այդ ժամանակամիջոցին թաղանթի ցածի մասը խորշումեց — նկատելի չէր, վոր յերկու որվա ընթացքում գաղի մի մասը դուրս էր յեկել ողապարիկից: Ընկնող ողապարիկը թեթևացելու համար, ողային ճանապարհորդները շարունակում էին դուրս գցել այն ամենը, ինչ վոր կարող էր բալաստի տեղ ծառայել: Բույովները, ավելորդ պարանները, մինչև անգամ պարենը, — ամեն ինչ՝ իզուր էր: Կարելի չէր ասել, վոր «Արծվի» թևերը կոտրած էյին և նա այլևս վեր բարձրացողը չէ: Մնում էր միայն վերջացնել այն, ինչ վոր իսկապես արել էյին արդեն մառախուղը և սառչելը: Հուլիսի 14-ի առավոտը, վաթսուհինգ ժամ հոգնեցուցիչ թռիչքից հետո, ողաչունները բաց արին կափարիչները, բաց թողեցին գազը թաղանթից և դուրս յեկան սառույցի վրա:


Ստրինգբերգը դիտողություններ կատարեց: «Արծվի» վայրեջբը յեղավ 83-րդ աստիճան հյուսիսային լայնության և 30-րդ աստիճան արևելյան յերկարության վրա:

Անդրեն և նրա աշխատակիցները գտնվում էին հիմա համարյա հավասար տարածության վրա Շպիցբերգներից և Ֆրանց Իոսիֆի Յերկրից: Այս կամ այն կողմը — ողաչու-

ներին բաժանում էր ամուր ցամաքից, վոր այցելում է մարդը, մոտ 950 կիլոմետր: Սառցապատ տարածությունների մեջ, յերեք մարդ մնացել էյին հիմա միայն իրենց ուժերի հույսով: Անսասան տոկունությամբ, ապրելու կամքը և հոգու արիւթյունը նրանց միակ դաշնակիցն էյին կյանքի կռվի մեջ:

Բայց վոր կողմն ուղղել ճանապարհը:

Թռչելուց առաջ Անդրեն նախատեսել էր, վոր «Արծվի» եկիպաժը կարող է ընկնել թշվառ դրության մեջ և այն ժամանակ նա ստիպված կլինի ապաստան փնտռել բևեռային արշիպելագներից մեկում:




«Արծվի» իսկույն սառույցի վրա իջնելու: Հանված է 1897 թ. հուլիսի 14-ին. արտահանված է 1930 թ.:

Այդ դեպքի համար, հատուկ ուղարկված նավը յերկու պարենի պահեստ էր շինել, մեկը — Հյուսիս-արևելյան Յերկրի, Շպիցբերգների հյուսիսային ափին, այսպես կոչված յոթը կղզիներից մեկի վրա, մյուսը Ֆրորա հրվանդանի մոտ Ֆրանց Իոսիֆի Յերկրի վրա: Խորհրդակցելուց հետո ճանապարհորդները վճռեցին գնալ դեպի Ֆրանց Իոսիֆի Յերկիրը: Մի շաբաթ, ուժերը հավաքելու համար, նրանք մնացին իրենց իջևանում:

Բևեռային գարունը մտավ իր իրավունքների մեջ: Զերմության աստիճանը զերոյի վրա յեր կանգնած: Հալվում էր: Սառույցը ծածկվում էր անուշ ջրի լճերով: Խաղաղ գորշ որբեր էյին: Մանր անձրև էր մաղում, յերբեմն

բարձրից մանր կարկուտ եր թափվում: Շուրջը տարածված էյին տորոսներ, փխրուն ձյունով ծածկված:

Անդրեն և նրա ընկերները թաղանթի կտորից վրան էյին շինել: Արշավանքի պատրաստվելով, նրանք շոկում և դարսում էյին պետքական իրերը թեթև սահնակի վրա: Աղափները մի մասը բաց էյին թողել նամակներով, դեռ թռչելու ժամանակ: Իսկ հիմա ազատեցին մյուս մնացածներին, և նրանք ել թռան զանազան կողմեր: Այդ կանգնած ժամանակը Անդրեն սպանեց առաջին արջը, և եկսպեղիցիան թարմ մսի պաշար արեց ճանապարհի համար:



Եկսպեղիցիային մասնակցողները քաշ են տալիս սահնակները մակույկի հետ տորոսների վրայով:
Նկարը հանված է ինքնափակվող ապարատով: Արտահանված է 1930 թվին:

Ընդամենը ամեն մի եկսպեղիցիայի անգամին հասավ 200 կիլոգրամ բեռ, ծանր՝ բրեզենտե մակույկը վիճակվեց յերեքից ամենայնիտասարդ և ուժեղ Ֆրենկելին:

Հուլիսի 22-ին Անդրեն և նրա ուղեկիցները կանգնեցին դահուկների վրա և ճանապարհ ընկան սառցե դաշտերով: Ծանապարհորդներն ստիպված էյին քաշ տալ ծանր

բարձած սահնակն անթիվ սառույցի կույտերի, տորոսների միջով, վորոնցից ամենափոքրերը մարդու բարձրութուն ունեյին: Սառույցը ամեն ուղութուններում կտրում էյին ահագին ջրային տարածութուններ և անանցանելի ձեղքեր: Նրանցից խույս տալու համար ստիպված էյին լինում մեծ պտույտներ անել և տանջալից ճանապարհն ավելի յերկարում եր: Մի քանի անգամ սահնակը գլորվել եր ջրով լցված փոսերի մեջ, և, յերբ եկսպեղիցիան կանգ եր առնում գիշերելու համար, ստիպված էյին լինում չորացնել թրջած իրերը:

Այդպես գնում էյին նրանք հինգ որ, իսկ Ֆրանց Իոսիֆի յերկրին նրանց հաջողվել եր մոտենալ միայն մի քանի կիլոմետրով:

Հուլիսի 27-ին հոգնած ճանապարհորդները կանգ առան որահանգստի: Այստեղ նրանք վճռում են թեթևացնել սահնակի բեռը և ստիպված թողնում են իրերի մի մասը: Հիմա ամեն մեկը կտանի իր վրա վոչ թե 200, այլ միայն 130 կիլոգրամ բեռ: Թարմ մսի պահասութուն չկա: Այս իջևանում Ստրինդբերգը և Ֆրենկելը նույնպես մի-մի արջ են սպանում: Ծանապարհորդները մի լավ քնեցին իրենց ընդհանուր քնապարկում, հիմնովին ամրապնդվեցին, տրամադրութունները լավացան: Նոր ուժերով նրանք շարժվեցին առաջ:

Ծանապարհը առաջվա նման սարսափելի յեր: Բեվեռային ամառն ավելի անանցանելի յե դարձնում նրան: Մի որ ճանապարհորդները ստիպված յեղան շրջել տաան և չորս մեծ լճեր, վոր գոյացել էյին սառցի վրա:

Սակայն ամենից սարսափելին Անդրեյի և նրա ուղեկիցների համար այն եր, վոր սառույցը, վորի վրայով նրանք անցնում էյին, շարժման մեջ եր — ծովի հոսանքը տանում եր նրան ուրիշ կողմ: Մինչև ծնկները ձյան մեջ, Անդրեյի խումբը դանդաղ շարժվում եր դեպի հարավ-արևելք, դեպի Ֆրանց Իոսիֆի Յերկիրը, իսկ ուժեղ սառույցե դրեյֆը քշում եր խմբին դեպի հարավ-արևմուտք:

Եկսպեղիցիան անցնում եր որը միջին թվով հինգից մինչև յոթը կիլոմետր: Բայց պատահում էյին առավել ծանր որեր, յերբ հաջողվում եր միայն առաջանալ մի կամ յերկու կիլոմետր:

Ճանապարհորդները գնում էյին արդեն յերկու շաբաթ։ Ոգոստոսի 4-ի մոտերքին արված էր միայն 70 կիլոմետր։ Մինչև Փրանց Իոսիֆի Յերկիրը մնում էր դեռ ճանապարհի չորս հինգերորդականը, իսկ արդեն շատ ուժ էր սպառվել ծանր բեռը տանելու, մանավանդ գրեյֆ անող սառույցի հետ կռվելու վրա։ Տանջված մարդիկ ձեռք բռնեցին անհասանելի Փրանց Իոսիֆի Յերկիրից և շարժվեցին գրեյֆի ուղղությամբ։ Նրանք հուսով էյին, վոր նա կոգնի նրանց հասնել յոթը կողմերին, վորտեղ շինված էր նրանց յերկրորդ պահեստը։ Իսկ մինչև այդ պետք էր պահպանել այն փոքրիկ պարենի պաշարը, վոր նրանք կրում էյին իրենց հետ։ Բարձր հացը վերջանում էր, մսի և բանջարեղենի կոնսերվաները պետք է անձեռնմխելի պաշար մնային ձմռանը։ Այնպիսի թանգարժեք իրեր, ինչպես շոկոլադ, թխվածքներ, շաքար և թանձրացրած կաթ, նույնպես պետք էր պահել վորքան կարելի յե յերկար ժամանակի համար։ Դիտվոր անունը ծանր աշխատանքի ժամանակ ցրտում իհարկե թարմ միսն ու ճարպն էյին։

Սակայն ոգոստոսի սկզբին արջերն անհայտացան և չէյին պատահում եկսպեդիցիային, իսկ փոկերը մոտ չէյին թողնում հրացանի ձգյունի չափ և մարդ յերևալու ժամանակ արագ սահում էյին ջուրը։

Ոգոստոսի 13-ին ճանապարհորդները նախաճաշեցին արջի մսի վերջին պատառով։ Անձրևի խոշոր կաթիլները տխուր շրխկում էյին վրանի մետաքսե տանիքի վրայով, վորի վրա դեռ փայլում էյին յերբեմն իրեն ծածկող լաքի մնացորդները։ Լուռ փաթաթեցին վրանը, և գլխները քարշ, ճանապարհորդները թողեցին իրենց գիշերվա իշկանը։


Անդրեն փորձեց զվարճացնել ընկերներին.

— Կորան մեր շրջող մսի խանութները։ Դա մինչև անգամ անքաղաքավարություն է պարոն արջերի կողմից, — կատակ արեց նա։ Յեվ իսկույն ավելացրեց. — Բայց, յերևակայեք, գիշերն ինձ թվաց, կամ գուցե դա ճիշտ լինեք, վոր մեկը շարժվում էր վրանի շուրջը և ծանր հեվում էր։

Այդ ժամանակ Ստրինդբերգը հանում էր իր սահնակը սառույցի միջի առմից։ Դուրս գալով պինդ տեղ, նա յետ նայեց և խայթածի նման բացականչեց.

— Արջեր։

Տորոսի վրա մի հարյուր քայլ հեռու անշարժ կանգնած էյին յերեք սպիտակ արջ — մեկը խոշոր, յերկուսն ավելի փոքր — և նայում էյին նրանց հետևից։ Հրացանները վերցնելով, մարդիկ ընկան արջերի հետևից, իսկ նրանք ճոճալով սկսեցին արագ հեռանալ իրենց հետազոտողներից։ Մի քանի դիպուկ ձգյուններ սպանեցին գազաններին։ Դա եզ արջ էր յերկու ձագերով։ Վորսորդները նրանցից քառասուն յերկու կիլոգրամ հրաշալի միս հանեցին։ Այդ պաշարը ապահովեցնում էր եկսպեդիցիային յերեք շաբաթով։



Յերենկը և Մոնդեբերգը սպանված արջի մոտ սառույցները վրայով անցնելու ժամանակամիջոցին։ Արտահանված է 33 տարուց հետո։

Բացի այդ հունցելով արջի արյունը և ճարպը ալյուրի հետ, ճանապարհորդները պրիմուսի վրա բլիթներ տապակեցին, վորոնք, թեև վոչ այնքան հաշող, փոխարինեցին նրանց հացը։ Իսկ արջի մսից ապուր էյին յեփում։ Ապուրի մեջ բանջարի փոխարեն զցում էյին սառույցի վրա գտած ջրիմուռը։

Ուժերը վերականգնեցնելու համար պետք էր շատ ուտել, սակայն անսովոր ստամոքսը դժվարությամբ էր

յուրացնում այդ անմարս կերակուրը, — ճամբորդները տանջ-
վում էին լուծից: Դժվարությամբ քայլելով, տոկուն մար-
դիկ այնուամենայնիվ գնում էին առաջ: Անդադար նրանք
գիտական զիտողություններ էին անում, հետևում էին
յեղանակին և սառույցներին, հողի նմուշներ էին հավա-
քում, վոր սառույցները տանում են միշտ ափերից: Նկա-
տողություններ էին գրում իրենց որսաետրերի մեջ: Իսկ
իջևաններում Ստրինգերզը մինչև անգամ նամակներ եր
գրում իր հարսնացուին: Նա կամենում եր նամակներն
ուղարկել, հենց վոր հասներ առաջին մարդաբնակ տեղին:

Այն ժամանակից, յերբ նոր ուղղություն եր վերցրած,
անցել եր մի ամիս: Ոգոստոսի 31 ին մայր չմտնող ամառ-
վա արևն առաջին անգամ դիպավ հորիզոնին: Յրտում եր:
Ջերմությունն ընկել եր չորս աստիճան զերոյից ցած:
Անդրեն և իր ուղեկիցները ձգտում էին հիմա հասնել
Շպիցբերգենի Հյուսիս-արևելյան Ֆերկրին, բայց այս ան-
գամ զրեկքը անփոփոխ հետ եր գցում նրանց գեպի արևելք:
Նրանք վերին աստիճանի հոգնած էին ամիսուկես շարժ-
վող սառույցի վրայով ընթանալուց: Լուծից նրանք ազատ-
վեցին, բայց մի նոր փորձանք յեկավ նրանց գլխին: Փրեն-
կելը վտար տորթի եր և նրա վրա պալար եր գոյացել:


Փրենկելը հազիվ եր մահ գալիս, ընկերները հերթով
տանում էին նրա սահնակը:

Անդրեյի խմբի ճանապարհը նույնն եր: Ֆերբեմն սառույցե
դաշտերը տրաքոցով, վոր հիշեցնում էին հրացանի ձայնը,
դիպչում էին հանկարծ իրար: Ֆերբեմն ել նրանք անձայն
հեռանում էին իրարից, և նրանց մեջ առաջանում էին
յայն ջրային տարածություններ, — ճանապարհորդները
նավում էին նրանց վրայով և անցկացնում իրենց իրերը:

Իսկ սառույցները, վորոնց քշում էին քամիները և
հոսանքները, շարունակում էին շեղվել ուղուց և միայն
անտարբեր աստղաբաշխական գործիքները ցույց էին տա-
լիս, վոր սառույցի զանգվածներն աննկատելի շարժվում
են և ուղղությունը փոխում:

Մկզբում նրանք շարժվում էին գեպի հարավ- արևմուտք,
հետո — գեպի հարավ արևելք: Իսկ սեպտեմբերի 12-ին
ուժեղ հոսանքը վերցրեց սառույցները և տարավ նրանց
ուղղակի հարավ, Շպիցպերգենի և Փրանց Իոսիֆի Ֆերկրի

միջի տարածությունը: Սառույցե դաշտերը տանում էին
նաև մարդկանց, վոր ապաստան էին գտել նրանց մակե-
րույթի վրա: Ճանապարհորդների բոլոր ջանքերը հասնել
ամուր ցամաքին՝ մնացին իզուր:



Սառույցե լեռների պանր (վերև) և նրա կտրվածքը (ցածր): Նկարը
գտնված է Ստրինգերզի հուշատետրի մեջ:

Ի լրումն ամեն ինչի, Ստրինգերզի սահնակն ընկավ
ջուրը՝ և նրա մոտ յեղած պարենը թրջվեց, իսկ Անդրեն
ինքն ընկավ սառույցի կտրվածքի մեջ: Նրան հանեցին
ընկերները: Արջեր և փոկեր չկային: Նորից ստիպված էին

պակասեցնել փայերը: Սեպտեմբերի կեսն էր: Սկսվում էյին աշնան ծովային փոթորիկները, մոտենում էր բեվեռային սարսափելի ձմեռը: Անդրեյի խումբը սառույցե դրեյֆի իշխանության տակ է — ստիպված են ձմեռել սառույցի վրա: Մարդիկ բոլորովին ուժասպառ են և հազիվ են փոփոխվում շարժում: Նրանց հագուստը մաշվել է և չափազանց թեթև է գալիք խիստ սառնամանիքների համար. սահնակը հազիվ է զիմանում: Սակայն ճանապարհորդները չեն հուսահատվում և սկսում են խրճիթ շինել սառույցից — այնպես, ինչպիսին շինում են եսկիմոսները:

Հինգ օրվա ընթացքում Անդրեյի խումբը տարվել էր դեպի հարավ 135 կիլոմետր: Սեպտեմբերի 17-ն էր: Այդ օրը սառն անգոր արևը դուրս չեկավ մառախուղի տակից և լուսավորեց սառույցե տարածությունները. — ճամբորդների առաջ տարածված էր ցամաքը: Սեկստանտը, խրոնոմետրը և քարտեզն այնմիջապես առան իրենց ձեռքը: Մի քանի բոպեյից հետո նրանք գիտեյին արդեն, վոր դա — Սպիտակ կղզին է:

Յած կանգնած արևը լուսավորում էր կղզին կողքից և նրա տափակ փայլատակող գմբեթը հեռվից թափանցիկ էր լերևում: Կղզին շրջապատված էր ծովն ընկնող ստուգադաշտերի պատերով և թվում էր բոլորովին անառիկ: Կարիք չկար նրա մոտ գնալ, և ճանապարհորդները շարունակեցին խրճիթը կառուցել սառույցի վրա: Բոլոր յերեքն էլ հավաքում էյին սառույցե կույտերը, նրանցից պատեր էյին դարսում և ջուր էյին ածում վրաները: Սառնամանիքը արդեն հասնում էր վեց աստիճանի, և շուտով այդպիսի «ցեմենտի» աղբեցություն տակ, սառույցե «աղյուսները» սառեցին և դարձան մի ամբողջություն: Հենց այդպիսի ձևով խրճիթի վրա կիսակլոր կամար դուրս բերեցին: Խրճիթը ուղղանկյունանի յեր և $5\frac{3}{4}$ մետր յերկարություն ու $3\frac{1}{2}$ մետր լայնություն ուներ: Յերկու ընդմիջող պատերը բաժանում էյին նրան յերեք մասի, կամ «սենյակների»: Ուղղանկյունների յերկար կողմերից մեկում մուտքն էր, վոր տանում էր «մառանը», նա միևնույն ժամանակ ծառայում էր և նախասենյակի տեղ: Այնտեղից մտնում էյին «սեղանատուն»: Այնտեղ, կարելի յե ասել կային «բոլոր հարմարությունները. լուսամուտ, պատրճան պատերի մեջ —

իրերի համար, և մինչև անգամ սեղան: Յերրորդ տեղը «ննջարան էր», — նրա ամբողջ սառցե հատակը բռնել էր յերեք հոգու քնապարկը:

Այն վայրկյանին, յերբ անվեհեր հետազոտողներն առաջին անգամ տեսան Սպիտակ կղզին, կարծես գործն սկսեց հաջող գնալ: Մյուս օրն Անդրեյին հաջողվեց սպանել մի փոկ: Հետո օր չեր անցնում, վոր վորսը նրանց մի արջ, կամ մի փոկ չբերեր: Սեպտեմբերի մինչև վերջերը սառցե խրճիթի մասնանում հավաքվել էր կես տարվա մսի պաշար:

Յեկավ բեվեռային ձմեռը: Զերմությունն արագ իջնում, պակասում էր և արդեն կանգնած էր տասն աստիճան վերայից ցած: Սեպտեմբերի 28-ին Անդրեն ընկերների հետ «գնաց» նոր բնակարանը: Իսկ նրանց սառույցը չշարժվելով վոչ առաջ, վոչ հետ, այնպես էլ վռվել էր Սպիտակ կղզուց մի քանի կիլոմետր հեռու: Բայց յերջանկությունը, վոր վերջապես ժպտաց անվեհեր ճանապարհորդներին, յերկարատև չեր: Հոկտեմբերի յերկուսի առավոտը նրանք արթնանացան սարսափելի դրդեյունից: Նրանց սառույցը չեր զիմացել շրջապատող սառցադաշտերի ճնշումին և ճեղքվել էր: Մի մեծ ճեղք անցնում էր հենց խրճիթի տակով: Նրա պատերից մեկն արդեն ծածկը չեր պահում, այլ կախվել էր ջրի վրա, և չեր փուլ յեկել միայն այն պատճառով, վոր ամուր սառել էր կտուրի հետ: Սառույցները վրա և նրանց մեջտեղի ջրի մեջ լողում էյին եկապեղիցիայի պարենը և սարբերը: Սակայն այստեղ ևս հերոսները չվհատեցին: Նրանք նետվում են փրկելու այն, ինչ վոր կարելի յե դեռ փրկել: Այդ ճակատագրական օրը, Անդրեն գրում է իր օրատետրում.

«Այսպիսի ընկերների հետ կարելի յե փորձանքից ազատվել՝ ինչպիսի հանգամանքներ էլ վոր լինեն»:

Այս խոսքերի վրա Անդրեյի առաջին օրատետրը կտրվում է: Իսկ յերկրորդ օրատետրն այնքան փտած էր, վոր նրա մեջ համարյա փոշին չեր կարելի ջուկել: Հաստատված է միայն, վոր Անդրեն միայն մինչև հոկտեմբերի 7-ն է մեջը գրել:

Ստորինգրերգի գրառումներից մենք իմանում ենք, վոր հոկտեմբերի 2-ի աղետից հետո, քաջերը դարձյալ մի գիշեր անց են կացնում իրենց խրճիթում, վոր ամեն բոպե

սպառնում եր փուլ գալ և թաղել նրանց իր տակ: Հետո նրանք սկսեցին գնալ կղզու հարավ-արևմտյան ծայրը, փորտեղ տափակ ափ ելին նկատել: Հոկտեմբերի 5-ի մոտ նրանք արդեն տեղափոխեցին կղզու վրա իրենց բոլոր գույքը: 7-ին Ստրինգբերգը գրել է, վոր նախորդակին խիստ ձյան փաթորիկ է տեղացել: Նա ըստ յերևույթին, վերջնականապես խախտել է անձնագորհ գիտնականների առանց այդ ել սպառված ուժերը Արկտիկայի հետ ունեցած անհաղթ կռվի մեջ: Այդ որից Ստրինգբերգի գրառումները նույնպես վերջանում են, և միայն հոկտեմբերի 17-ի դիմաց նրա գրպանի որացույցում կարելի չե ջոկել «Դեպի տուն»...

Արդյոք, ինչ է յեղել հոկտեմբերի 7-ի և 17-ի միջև ինչ տուն վերադառնալու մասին ե ասում այդ վերջին գրառումը: Վերջապես, ինչից այնուամենայնիվ կորան ճանապարհորդները: Հազիվ թե մեկը կարող կլինի յերբեիցե պատասխանել այդ հարցերին: Մի բան միայն կարելի չե ասել. նրանց մահը սովից չե, — Անդրեյի ճամբարում գտնված ե շատ անփնաս մնացած տուփերով կոնսերվներ: Հրացանները և փամփուշտները նույնպես անփնաս ելին, — կնշանակի, պարենի պաշարը կարելի չե լրացնել վորսով: Դիակների զրուծյունը ցույց է տալիս, վոր առաջինը մեռել է և թաղվել իր ընկերների կողմից Ստրինգբերգը: Ինչ վերաբերում է Անդրեյին և Ֆրենկելին, վորոնց կմախքներն ընկած ելին իրար կողքի, յենթադրում են, վոր նրանք քնել են և քնի մեջ սառել:

Բայց դա յերբ ե կատարվել: Արդյոք յերկար ժամանակ Անդրեն և Ֆրենկելն ապրել են իրենց բարեկամից հետո:

Դրան մենք յերբեք պատասխան չենք ստանա: Մեռնող հերոսների վերջին ժամերը մարդկանցից ծածուկ մնացին: Յեվ նրանց սառույցների և բեկուային զիշերվա խավարի մեջ հանգչելու պապամոլթյունը մեզ չհասավ:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այն ժամանակվանից անցել է յերեսուն յոթ տարի: Շատ բան ե փոխվել այդ ժամանակվանից: Այն տարիներում գիտնականներն իրենց լաբորատորիաներում միայն

առաջին յերկչոտ փորձերն ելին անում անթել ելեկտրական ենթերգիայի հաղորդելը մեծ հեռավորության վրա: Իսկ հիմա ռադիոն այնպես սովորական առարկա չե դարձել, ինչպես հեծանիվը կամ կարի մեքենան: Ռադիո-հեռագիրը սարքում են մինչև անգամ մանր արդյունաբերող նավերի վրա: Ինչ վերաբերում է ողանավերին, առանց ռադիոսպարառի անկարելի չե մինչև անգամ նրանց յերեւակայել:

Այժմ ռադիոկապը պահպանվում է ցանկացած տարածությունների վրա: Յես չեմ կարող մոռանալ, ինչպես մի ամառվա դիշեր, 1929 թ. յես և իմ յերկու յերեք ընկերները կրծքով հենված ռադիոստի միջքի հետևը, աչք չեյինք հեռացնում նրա մատիտի ծայրից, վոր ճռալով վազում եր թղթի վրայով: Դեպքը Լենինգրադում եր, «Կարմիր լրագրի» թերթի խմբագրատանը: Նրա փոքրիկ կարճ ալիքանի կայանը գիշերվա ժամերին լուրեր եր ընդունում «Դրաֆ Յեպելին» գերմանական դիրիժաբլից, վոր այն ժամանակ իր պատմական աշխարհաշուրջ թոփչեք եր կատարում: Դա արտակարգ ըոպեններ ելին: Ողանավը սլանում եր խաղաղ ովկիանոսի անսահման ջրային հարթության վրայով, ժամը հարյուր կիլոմետր արագությամբ, իսկ մենք, գտնվելով տասնյակ հազար կիլոմետր հեռավորության վրա դիրիժաբլից, գիտեյինք ինչ են անում սվյալ վայրկյանին նրա ճանապարհորդները և ելիպաժը:

«Մեր տակովը լողում է կետը: Նա ջրի շիթ ե թողնում» — հայտնում ելին «Յեպելինից»: Յեվ հենց նույն վայրկյանում ռադիոստն այդ լուրը գրի յեր առնում թղթի վրա:

Հարյուրավոր շոգենավեր, խաղաղ ովկիանոսն ակոսող, կապված ելին դիրիժաբլի հետ ռադիոյի միջոցով: Յեթե ողանավն աղետի սիգնալ տար, ամենամոտիկները նրանցից իսկույն կհետվեյին նրան ոգնության: Անդրեն և նրա ուղեկիցները կործանվեցին վոչ հեռու այն տեղից, վորտեղ յերեսուն և մեկ տարուց հետո, սպոցահատ «Կրասնը» վերցրեց սառույցի վրայից Նոբելեյի խումբը: Ինչպես հայտնի չե, դիրիժաբլ «Խոտալիան», Հյուսիսային բեկոր թռչելուց վերադառնալիս, կործանվեց ծովային փոթորկի ժամանակ Հյուսիս-արևելյան Յերկրի ափերի մոտ: Նրա եկիպաժի մի մասը եկապեղիցիայի պես Նոբելեյի հետ փրկվեց՝ շնորհիվ

միայն իրենց արշավանքի ռազմականին: Ռազմապարտան անձնաս եր մնացել զիրիժաբլի կործանման ժամանակ և Նորիլեյի խումբը կարողացել եր իմացնել իրենց թշվառ դրության մասին:

Յեթե «Արծվի» վրա ռազմահարկի լինելը, շատ հավանական է, վոր աշխարհը չեր կորցնի յերեք աչքի ընկնող զիտության գործիչներին:

Բայց յերեսուն յոթ տարի առաջ տեխնիկան դեռ ռազմի չգիտեր: Զգիտելին այն ժամանակ ինքնաթիռների և զիրիժաբլիների մասին, վոր հիմա սովորական միջոց է հաղորդակցության, ինչպես յերկաթուղին, կամ շոգենավը:

Անդրեն, Ստրինգերգը և Ֆրենկելն իրենց կյանքը զոհեցին անվեհեր փորձի համար, հասնել բեռնին անդեկավար անբուստատով: Ուժասպառիչ թոփչքի ժամանակ սառցապատ «Արծվի» վրա Անդրեն կարծես նախազգուշ եր, վոր նրանց վողբերդական վախճան է սպասուում: Յեվ նա զրել է իր որատեություն հետևյալ խոսքերը. «Կհամարեն մեզ խելազար, թե՛ կհետևեն մեր որինակին»:

Գիտության յերեք նահատակները պատասխան չստացան այդ հարցին, — նրանք կորան: Սակայն նրանց վողբեփորող զաղափարը չմեռավ: Իրեն ձեռնարկումի մեջ Անդրեն իրավացի դուրս յեկավ, — մարդիկ հետևեցին նրա որինակին: Արկտիկային նվաճում են ողով և ճիշտ սյնպես, ինչպես յերազում եր Անդրեն, — ղեկավարվող թռչող ապարատով: Բայց այդ անում են վոչ թե անգոր առաջատար վոր ողապարիկով, այլ ուժեղ զիրիժաբլիներով և ինքնաթիռներով:

1926 թ. ամերիկացի Բերդը հասնում է ինքնաթիռով հյուսիսային բեռնը և հաջողությամբ վերադառնում իր ստարտի տեղը Շպիցբերգենի վրա:

Նույն տարին Ամունդսենը «Նորվեգիա» զիրիժաբլով կտրում է բեռնային ավազանը Շպիցբերգենից մինչև Ալյասկա և ճանապարհին յերեք զրոշակ է գցում հյուսիսային բեռնը:

Իսկ յերկու տարուց հետո ամերիկացի Ուիլկինսի ինքնաթիռը նույն ճանապարհն է անում, ինչ վոր և «Նորվեգիան», բայց միայն հակառակ ուղղությամբ: Ուիլկինսը թռչում է, կարելի չե ասել բեռնի կողքով:

Յեվ թեև Նորիլեյի եկապեղիցիան 1928 թ. վերջացավ աղետով, այնուամենայնիվ նրա զիրիժաբլ «Իտալիան» կարողացավ աղետից առաջ անցնել հյուսիսային բեռնի վրայով:

Անցնում է ևս մի տարի, և Բերդի ինքնաթիռը նորից պտտում է բեռնի վրա, — այս անգամ հարավայինի վրա:

Այն, ինչին վոր ձգտում եր Անդրեն, իրագործված է. յերկու բեռնների վրա արդեն մի քանի անգամ անցել են սղանավեր, մարդու ձեռքով ղեկավարած:

Անդրեն սկիզբ դրեց Արկտիկայի նվաճմանը ողով, բայց հենց նա սկսեց իրանով Հյուսիսի հետ կովում ընկած ողային հերոսների մահվան ցուցակը: Բավական է հիշել Ամունդսենի, Մալգրենի, ամերիկական ողաչու Նյելսոնի և Բորլանդի, խորհրդային-կալվիցի և Պորցելի և շատ ուրիշների անունները, վորպեսզի հիշվի, ինչպիսի ծանր կորուստներ են հետևում ամեն մի քայլին, բեռնը շրջապատող անսովոր սառցե բերդին մոտենալը:

Այդ գոհերը չեն կանգնեցնում մարդուն: Տեխնիկան առաջ է գնում հակայական քայլերով և ամեն տարի տալիս է նրա ձեռք նորանոր զենք: Հարձակողականը շարունակվում է և կշարունակվի:

1931 թ. հուլիսին «Գրաֆ Յեպելինը» թռչում եր Արկտիկան ուսումնասիրելու համար հետևյալ մարշրուտով. Ֆրիդրիխսֆեն — Բերլին — Լենինգրադ — Արխանգելսկ — Ֆրանց Իոսիֆի Յերկիր — Հյուսիսային յերկիր և դեպի հետ: Հսկայական ճանապարհը, 13 հազար կիլոմետր, զիրիժաբլը կտրեց 110 ժամում:

Այդ թոփչքն ապացուցեց, վոր լավ սարքավորված ողանավի համար պատրաստված աշխատակիցներով, ճանապարհը դեպի բեռնը բաց է: Մի մարդու համար, վոր վրնված է ժամանակակից տեխնիկայով, արգելք չկա, չկան յերկրի յերեսին անմատչելի տեղեր:

«Գրաֆ Յեպելինը» արկտիկական թոփչքը — նոր փայլուն հաջողություն է ողաչական տեխնիկայի: Այդ տեխնիկային մենք պիտի վոչ միայն հասնենք, այլ և անցնենք:

Մեր Հյուսիսում կան շատ անտառներ, մուշտակավոր և ծովային զաղաններ, ձուկ, ապառիտ, ածուխ, մետաղներ՝ մինչև փոսկին և պլատինը: Մեծ են խորհրդային Հյուս-

սիսի հարստությունները, բայց մեծ են ևս նրա տարածությունները:

Խորհրդային Միությունը սահմանակից և Սառուցյալ ովկիանոսին 18 հազար կիլոմետր - տարածության վրա: Դա յերկու անգամ մեծ տարածություն է, քան Լենինգրադից մինչև Վլադիվոստոկ: Իրավացի յեր բեկոի մի հետադոտող, յերբ ասում եր, վոր մեր յերկրը «իրեն զխաւոր ֆասագով զուրս է գալիս Սառուցյալ ովկիանոսի վրա»: Այդ անվերջ ֆասաղի առաջ, մշտական սառույցների մեջ, խորհրդային Արկտիկայի սեկտորի մեջ թափթփած են անթիվ մեծ և փոքր կղզիներ: Առանց ինքնաթիռների և դիրիժաբլների անհնարին է տիրել այդ անծայր, ընդարձակ տեղերին: Արդեն տասը տարի յե մեր ինքնաթիռներն աշխատում են հեռավոր Հյուսիսում: Նրանք հետախուզում են սառույցներն անցնող նավերի առաջ, փոխադրում են մարզկանց, պոստը, մորթիներ և ուրիշ թանկարժեք բեռներ: Ինքնաթիռը զարձավ մարդու հավատարիմ զենքը Արկտիկայի դեմ պայքարի մեջ: Այդ պայքարում մեր սավառնորդներ Չուկոտկային, Բարուշկինը, Սլեպչովը, Գալիշեվը, Լեվանսկին և ուրիշները համաշխարհային հռչակ նվաճեցին խորհրդային բեռնային ողազնացության համար:

Հիմա խորհրդային դիրիժաբլների հերթն է:

Խորհրդային Միությունն ունի արդեն փոքր ուսումնական դիրիժաբլներ, իսկ հիմա կառուցվում են իսկական ողային հսկաներ:

Ծրագրված է խորհրդային Հյուսիսը ծածկել տասնյակ հազար կիլոմետր ողային ճանապարհներով: Աստիճանաբար այդ ծրագիրն իրագործվում է: Մեր յերկրի ահագին մարզերը, նրա խուլ և անմատչելի շրջանները կապվում են սոցիալիստական կենտրոնների հետ, շինարարության և կուլտուրայի հետ:

Ինքնաթիռները ծառայում են արդեն այդ ողային գծերին, շուտով նրանց կմիանան և դիրիժաբլները: Մեր ամենահարուստ Հյուսիսի նվաճման գործի մեջ և՛ առաջինները և՛ յերկրորդները վերջին դերը չեն խաղալու:

Մենք ապրում ենք նույնպես այն ժամանակի նախորդակին, յերբ շնորհիվ ողազնացության, ավիացիային, մե-

տեորոլոգիայի և ռադիոկապի առաջադիմություններին, տրանսբեռնային ողային գիծը կլինի ամենակարճ և ամենահարմար ճանապարհը Յեվրոպայից Ամերիկա: Յեվ ողանավերն անարգել կսկսեն թռչել «յերկրագնդի ամենանմատչելի կետի» հյուսիսային բեկոի վրայով:

Սակայն և այն ժամանակ մարդիկ կհիշեն Անդրեյին, Ստրինգերգին և Ֆրենկելին: Նրանք առաջինը սկսեցին Արկտիկան ողով նվաճելը, բայց անվեհեր թռիչքին նրանք զոհեցին իրենց կյանքը:

Յեվ այդ առաջին ողաչունների թռիչքը դեպի բեռը, նրանց արիությունը, եներգիան և կամքի ուժը յերբեք չեն մոռացվի:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նավապետի պատմածը	3
Դեպի բեհուր ուղով	5
«Արծիվ»	11
Ողապարիկը պատրաստ է	16
«Վերջո» ծովախորշը	22
Անդրեյի հանելուկը	29
Սպիտակ կղզու վրա	35
Մառախուղի և սպիտակ իշխանության տակ	46
Յեզրակացություն	58


482 8-1

ԳԻՆԸ 30 ԿՈՊ.

Д. ЮЖИН
ПОЛЕТ АНДРЕ



АРМЕНИЗ—ЭРИВАНЬ



ՀՀ Ազգային գրադարան



NL0390659

4369

